# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 47 (1547) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 24, 2011
VOLUME 31, NO. 47 (1547) SATURDAY, DECEMBER 24, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՖՐԱՆՍԱՆ ՍԱՅԼԻ ՈՒ ՄՈՒՐՃԻ ՄԻՋԵՒ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Այս օրերուն, ֆրանսա բարոյապէս եւ քաղաքականապէս, անգամ մը եւս փորձաքարի կը զարնուի Թուրքիոյ կողմէ հայոց դէմ կատարուած Ցեղասպանութիւնը ուրացողներու հարցի կապակցութեամբ: Ան, սպառնալիքներու եւ ճնշումներու ներքոյ տեղի տալու կամ, իր ազգային արժանապատուութեան կառչած մնալով վեհանձնօրէն իր ընդունած սկզբունքին հաւատարիմ մնալու ազգային եւ քաղաքական դժուարին կացութեան մէջ կը գտնուի: Սայլի եւ մուրճի միջեւ մնալու պէս բան մը:

22 Դեկտեմբեր 2011-ին տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Երեսփոխանական ժողովը, ուր պիտի քննարկուի եւ քուէարկուի Թուրքիոյ կողմէ հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեան ժխտումի կապակցութեամբ պատրաստուած ու ժողովին ներկայացուած օրինագիծ մը: Համաձայն այդ օրինագծին՝ բրէական յանցագործութիւն պիտի նկատուի Ցեղասպանութեան ժխտումը Ֆրանսայի հողատարածքի սահմաններէն ներս: Արդարեւ՝ ժխտողը պիտի ենթարկուի նիւթական տուգանքի եւ բանտարկութեան: Այս օրինագծի վաւերացումը՝ մի անգամ ընդ միշտ կ'ենթադրէր Ցեղասպանութեան ճանաչումն ու Դատապարտում:

Եւ ահա փոթորիկը:

Ինչպէս որ կ'ակնկալէինք՝ թուրք իշխանութիւնները խուճապի մատնուեցան: Սկսան պատէ պատ զարնուիլ: Միջնորդներ, պատգամներ, պատուիրակութիւններ առաքեցին Փարիզ, համոզելու համար Սարքոզին, երեսփոխաններ ու ազդեցիկ դէմքեր, որ յետս կոչեն օրինագծի հաստատման գործընթացը: Կապի մէջ մտան ազդեցիկ թերթերու հետ:

Սկսան սպառնալիքներ տեղացնել կրկին Ֆրանսայի գլխուն: Այդ խուճապի բազկերակի զարկերը հանդիսացան Թուրքիոյ Վարչապետ Էրտողանը, Արտաքին Գործոց Նախարար Ահմէտ Տավուտ Օղլուն եւ Փոխ Վարչապետ Պուլէնտ Արընչը:

Թուրքիոյ Վարչապետ Էրտողան, Ֆրանսայի Նախագահ Սարքոզիին առաքած նամակ մը առաքեց շուտով ուր, բոլորին ծանօթ իր անքարտաւան ու կարծր ոնով կը պատգամէր, որ եթէ խնդիրը յառաջ տարուի, այսինքն, Ազգային լիակատար ժողովը վաւերացնէ Օրինագիծը, ապա այս անգամ երկու երկիրներու՝ Թուրքիոյ եւ Ֆրանսայի քաղաքական, տնտեսական, մշակութային, ինչպէս նաեւ Ֆրանսայի համար մեծապէս շահաբեր բազմաթիւ այլ շինարարա-

*Տար.ը էջ 18*

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԻ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԷՐՏՈՂԱՆ ՍՊԱՌՆԱՑԱԾ Է ՍԱՐՔՈԶԻԻՆ

*Ֆրանսայի Ազգային ժողովին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծի քուէարկութեան նախօրեակին, Թուրքիա կը շարունակէ սպառնալ ֆրանսական շահերուն:*

*Պաշտօնական Անգարան յայտարարած է թէ, այդ օրինագիծի ընդունումը «անդառնալի հետեւանքներ պիտի ունենայ» Թուրք-ֆրանսական յարաբերութիւններուն համար:*

*Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թայիփ Էրտողան յայտարարած է որ, Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող օրինագիծը ուղղուած է Թուրքիոյ պետութեան, Թուրք ժողովուրդի եւ Ֆրանսայի մէջ ապրող Թրքական համայնքին դէմ: «Կը փափաքիմ բացայայտ կերպով յայտարարել, որ նման քայլերը շատ ծանր հետեւանքներ պիտի ունենան Թուրք-ֆրանսական քաղաքական, տնտեսական եւ մշակութային յարաբերութիւններու համար, իսկ անոր պատասխանատուութիւնը ամբողջութեամբ այդ քայլի նախաձեռնողներուն վրայ է»,- Ֆրանսայի Նախագահ Նիքոլա Սարքոզիին ուղղուած նամակին մէջ գրած է Էրտողան:*

*Ֆրանսայի Ազգային Ժողովը Դեկտեմբեր 22-ին պիտի քննարկէ ռասիզմի դէմ պայքարի եւ Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնելու մասին նոր օրինագիծը: Վերոնշեալ օրինագիծը օրեր առաջ ընդունուած էր Ֆրանսայի Ազգային ժողովի Իրաւական հարցերով յանձնաժողովի կողմէն:*

*«Յոյսով եմ, որ մենք մինչեւ վերջ կ'երթանք, եւ Ֆրանսան մարդու իրաւունքներու երկիր կը դառնայ»,- ըսած էր օրինագիծի հեղինակ Վալերի Պոյէր:*

*Նոր օրինագիծին համաձայն, Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողներուն մինչեւ մէկ տարուան բանտարկութեան եւ 45.000 եւրօ տուգանքի կրնան ենթարկուիլ:*

*2006-ին Ֆրանսայի Ազգային ժողովը հաւանութիւն տուած էր Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող այլ օրինագիծի մը: Սակայն այդ օրէնքը կեանքի կոչելու համար անհրաժեշտ էր անոր հաստատումը Ծերակոյտին կողմէ: Ֆրանսայի Ծերակոյտը, սակայն, 2011 Մայիսին կայացած նիստին՝ ձայներու 196 դէմ եւ 74 կողմ յարաբերակցութեամբ՝ մերժեց Հայոց Ցեղասպանութեան ժխտումը քրէականացնող այդ օրինագիծը:*

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՍՈՒԱԾ Է 111-ՐԴԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

*Բրիտանական «Էքոնոմիստ» հեղինակաւոր հանդէսի հետազօտական ընկերութիւնը (The Economist Intelligence Unit) հրապարակած է «Ժողովրդավարական Աղիւսակ-2011» զեկոյցը: Զեկոյցին մէջ ներառուած 167 երկիրներու շարքին Հայաստան այս տարի կը գրաւէ 111-րդ դիրքը:*

*Աղիւսակը կազմելու համար նկատի առնուած են ժողովրդավարութեան հիմնական հինգ ցուցանիշերը՝ ընտրական գործընթաց եւ բազմակարծութիւն, կառավարութեան գործունէութիւն, քաղաքացիական ազատութիւններ, քաղաքական մասնակցութիւն, քաղաքական մշակոյթ, «վիճակը» այս կամ այն երկրին մէջ:*

*Զեկոյցը կը կազմուի փորձագէտներու գնահատականներու եւ համապատասխան երկիրներուն մէջ կատարուած հասարակական կարծիքի հարցումներու հիման վրայ:*

*167 երկիրները դասակարգուած են ըստ չորս խումբի՝ լիարժէք ժողովրդավարութեան երկիրներ, ոչ լիարժէք կամ փխրուն ժողովրդավարութիւն ունեցող եր-*

*Տար.ը էջ 5*

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՀ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԱՅՑԸ



*Արհ. Միքայէլ Եպս. Մուրատեան Տօքթ. Արշակ Գազանճեանի եւ Գաբրիէլ Մոլոյեանի հետ*

*Այս օրերուն Հարաւային Գալիֆորնիա կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ առաջնորդ Արհիապատիւ Միքայէլ Եպս. Մուրատեան:*

*Դեկտեմբերի 17ին նորանշանակ առաջնորդը իր պաշտօնական անդրանիկ այցելութիւնը տուաւ Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցին: Այստեղ Գերպ. Միքայէլ Եպս. Մուրատեանին ողջունելու եկած էին Հայց.*

*Տար.ը էջ 18*

## ՖԱՍԻԷ. «ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԼՈՒԾՈՒԵԼ ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՒԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ»

*Մինսկի խումբի արդէն իսկ նախկին համանախագահ, ֆրանսացի Պեռնար Ֆասիէ, Դեկտեմբեր 19-ին Պաքուի մէջ իր ունեցած մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարած է թէ, Ղարաբաղի հարցը չի կրնար լուծուիլ ՄԱԿ-ի բանաձեւերուն միջոցաւ:*

*«Մինսկի խումբի գլխաւոր ձեռքբերումը լայնածաւալ ռազմական գործողութիւններու վերսկսումէն խուսափելն էր», - ըսած է Ֆասիէ, աւելցնելով, որ թէեւ բանակցային գործընթացը լուծումի չէ հասած, սակայն որոշ յառաջընթաց կարելի եղած է ձեռք ձգել:*

*Ֆրանսացի դիւանագէտ ատրպէյճանցի լրագրողներուն յայտնած է որ, Մինսկի խումբի ամենամեծ նուաճումը Մատրիտեան սկզբունքների մշակումն էր:*

*«Մինչեւ 2007 թուականի Դեկ-*

*Տար.ը էջ 5*

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Կաթողիկէ համայնքի Ս. Ծնունդի տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը

# ԵԹԷ ՅԱՆԿԱՐԾ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՍԽԱԼ ԸՆՏՐԻ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Հայաստանի խորհրդարանի գործարար պատգամաւորների մի մասը յայտարարում է, թէ ինքը որոշում է կայացրել չառաջադրուել խորհրդարանի յառաջիկայ ընտրութեանը: Ինչով է իշխանութիւնը, կամ աւելի շուտ հենց Սերժ Սարգսեանը, համոզել այդ պատգամաւորներին, որ չառաջադրուեն: Թէ նա պարզապէս արգելել է առաջադրուել, այսինքն ոչ թէ համոզել է, այլ ուղղակի այդպէս հրահանգել:

Կայ կարծիք, որ Սարգսեանը չի կարող այդպիսի հրամաններ տալ օլիգարխներին, քանի որ նրանք «կը դառնան ու կը պատառոտեն իրեն»: Ընդ որում, այդպիսի կարծիքը տարածուած է նաեւ օլիգարխիայի հետ կապուած այլ հարցերում: Օրինակ, քիչ հաւանական է համարւում օլիգոպոլ համակարգի դէմ իրական պայքարը, քանի որ օլիգարխիան այդ դէպքում «կը դառնայ ու կըպատառոտի...»: Դա իսկապէս կարեւոր հարց է՝ Սերժ Սարգսեանն է օլիգարխների «գերին», թէ նրանք են իշխանութեան «պատանդը»: Լեւոն Տէր-Պետրոսեանն, օրինակ, յայտարարեց, որ օլիգարխիան է իշխանութեան պատանդը: Միարժէք չէ իհարկէ, բայց, անկախ այդ յայտարարութեան քաղաքական շարժառիթներից ու համատեքստից, այդուհանդերձ խոշոր հաշուով դա հենց այդպէս է՝ օլիգարխիան է իշխանութեան «պատանդը», այսինքն օլիգարխիայի պոչն է իշխանութեան տակ, ոչ թէ հակառակը:

Հետեւաբար, իշխանութիւնը միանգամայն ի զօրու է լուծել օլիգարխիայի հարցը, այդ սեգմենտը դնել խաղի այլ՝ ազատական կանոնների շրջանակի մէջ, դնել օրէնքի առաջ հաւասարութեան շրջանակի մէջ, վերացնել օլիգարխիկ դասի տնտեսա-քաղաքական եւ ֆիզիկական արտօնութիւնները: Ամբողջ հարցն այն է, թէ արդեօք ով է այդ իշխանութիւնը, կամ արդեօք Սերժ Սարգսեանն այդ իշխանութիւնն է:

Այն, որ նա փորձում է դառնալ իշխանութիւն, թերեւս ակնյայտ է: Բայց, հարցը նաեւ այն է, թէ ինչպէս է փորձում եւ ինչի համար է փորձում: Փորձում է օլիգարխիային պարզապէս լռվին իրեն ենթարկեցնելու եւ օլիգարխների հենց իր թիմը ձեւաւորելու համար՝ հիմնական եւ պահեստային կազմերով հանդերձ, թէ՝ փորձում է իր յայտարարած եւ հռչակած բարեփոխումներն առաջ տանելու համար լինել իշխանութիւն:

Իհարկէ, Հայաստանում մեղմ ասած շատերն են կասկածում, որ Սերժ Սարգսեանը կարող է ունենալ բարեփոխումների ներքին մղում, կարող է լինել այն ժողովրդավարական եւ ազատական արժէհամակարգի կրողը, որի հիման վրայ Հայաստանում պէտք է հաստատուի իրաւական պետութիւն: Եւ այդ կասկածներն առ այսօր միանգամայն հիմնաւոր են, քանի դեռ Սերժ Սարգսեանը գործով չի հաստատել հակառակը: Բայց, նաեւ կայ այն պահը, որ Հայաստանում ժողովրդավարական ռեֆորմի իրականացումն ամենեւին չի ենթադրում, որ իրականացնողը կամ առաջնորդողը կարող է լինել իրապէս ժողովրդավար, ներքուստ ռեֆորմատոր: Բանն այն է, որ Հայաստանի համակարգային ճգնաժամը հասունացել է անտանելիութեան եւ անելանելիութեան աստիճան, եւ չլինելով ներքուստ ռեֆորմատոր, չլինելով այն արժէհամակարգի կրողը, որի մասին յայտարարում է միջազգային ամպիոններից, նա այդուհանդերձ ստիպուած է լինելու գնալ բարեփոխումների: Դա է պահանջում նրա անձնական շահը, դա է պահանջում ինքնապաշտպանութեան եւ ինքնապահպանման բնազդը:

Շատերի համար է գուցէ իրավիճակը շատ արագ հասունացել անելանելիութեան աստիճան, եւ դա գուցէ շատերի համար անսպասելի էր: Բայց, Հայաստանի համակարգը չափից արագ սպառուեց, որովհետեւ յայտնուեց համաշխարհային համակարգի սպառման գործընթացի ծիրում, անխուսափելիօրէն յայտնուեց: Եւ համաշխարհային ճգնաժամը էլ աւելի արագացրեց Հայաստանի համակարգային կոլապսը: Դրանից դուրս գալու միակ միջոցը ռեֆորմներն են:

Եւ եթէ ոչ ներքին համոզումով, ապա ինքնապաշտպանման եւ ինքնապահպանման բնազդով Սարգսեանը ստիպուած է հաստատել իր իշխանութիւնը, որպէսզի յետոյ առաջ տանի ռեֆորմները: Անկասկած, նա նոյն կերպ էլ փորձում է գործողութիւնների յաջորդականութեան սխեմա կառուցել միջազգային հանրութեան մօտ, ակնկալելով աջակցութիւն իշխանութիւն հաստատելու հարցում՝ «օգնէք իշխանութիւնս հաստատեմ, որ յետոյ էլ կարողանամ ռեֆորմներ անել», միջազգային հանրութեանը թերեւս ասում է Սերժ Սարգսեանը:

Ակնյայտ է, որ նրա այդ խօսքն ընդունւում է եւ նրան աջակցում են իշխանութիւն հաստատելու հարցում: Սերժ Սարգսեանն էլ գուցէ ակնկալում է, որ գուցէ իշխանութիւնը հաստատելուց յետոյ, հնարաւոր կը լինի ինչ որ կերպ համոզել Արեւմուտքին եւ խուսափել ռեֆորմներից, այսինքն չհասնել դրանց, այլ մնալ միայն իշխանութեամբ:

Բայց, Սարգսեանն այստեղ թերեւս պէտք է որ գիտակցի այդ ակնկալիքի անհեռանկար լինելը: Բանն այն է, որ թէեւ Արեւմուտքն աջակցում է իշխանութեան հաստատման գործընթացին, այդ հարցում առանցքային հանգրուան դիտելով 2012 թուականի խորհրդարանի ընտրութիւնը, այդուհանդերձ պահում է այն բոլոր մեխանիզմները, որոնց միջոցով Սարգսեանի իշխանութիւնը կարող է չեզոքանալ հաշուած րոպէներում, անցնելով կամ Տէր-Պետրոսեանին, կամ Քոչարեանին, կամ էլ երկուսին միասին:

Բանն այն է, որ եթէ Հայաստանում չեն իրականացուելու ռեֆորմները, իրական ռեֆորմներ, եթէ Սարգսեանը չի անելու այն, ինչ յանձն է առել եւ ինչի համար աջակցւում է, ապա այդ դէպքում Հայաստանը շատ աւելի կառավարելի կարող է լինել Տէր-Պետրոսեանի, եւ առաւել եւս Քոչարեանի միջոցով, հետեւաբար Սարգսեանին պահելու իմաստը՝ թէ Արեւմուտքի, թէ նոյնիսկ Ռուսաստանի համար, կարող է վերանալ:

Հայաստանի դերը աշխարհաքաղաքական եւ տնտեսական նոր զարգացումներում էապէս պայմանաւորուած է երկրի ժողովրդավարացման եւ իրաւականացման աստիճանի էական բարձրացումից: Եթէ դա տեղի է ունենում, ուրեմն Հայաստանը ձեռնամուխ է լինում համաշխարհային զարգացումներում իր դերակատարութեանը, իսկ եթէ դա տեղի չի ունենում, ուրեմն իր դերը չի կատարում Սերժ Սարգսեանը, եւ այդ դէպքում որպէսզի Հայաստանը «չհեռացուի» քարտէզից, Հայաստանի իշխանութիւնից պէտք է հեռանայ Սերժ Սարգսեանը:

Կասկած չկայ, որ թէ Արեւմուտքը չի կամենայ Հայաստանի հեռացում, այլապէս այդքան ջանք չէր թափի երկրի վերափոխման ուղղութեամբ, թէ առաւել եւս Հայաստանի «հեռացում» համաշխարհային սցենարներից չի կամենայ Հայաստանի հասարակութիւնը: Հետեւաբար, հանրային եւ միջազգային կոնսենսուսը, այն դէպքում, երբ Սարգսեանը կը փորձի կիսատ թողնել եւ հրաժարուել իր ստանձնած դերակատարութիւնից, անխուսափելիօրէն կը հանգեցնի նրա հեռացմանը:

Ընտրութեան հնարաւորութեան մեծութիւնը սովորաբար բարդացնում է ընտրութիւնը: Սերժ Սարգսեանի պարագայում, ընտրութեան հնարաւորութիւնը մեծ չէ, հետեւաբար ընտրութիւնն էլ բարդ չէ: Նրա դէպքում, չափազանց բարդ կարող է լինել սխալ ընտրութեան հետեւանքը:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՈՒՇԱՑԱԾ ՊԱՅԾԱՌԱՏԵՍՈՒԹԻՒՆ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

Ինչո՞ւ են իշխանամէտ մարդիկ ընդդիմադիր դառնում: Իհարկէ, տարբեր պատճառներով: Արեւմուտքում ամէն ինչ պարզ է. իշխանութիւնը պարտւում է ընտրութիւններում եւ հանգիստ աշխատում է ընդդիմադիր դաշտում՝ փորձելով յաջորդ ընտրութիւններում «ռեւանշ» վերցնել (այդ բառի մէջ ոչ մի վատ երանգ չկայ): Բայց Ռուսաստանում եւ Հայաստանում իշխանութիւնն ընտրութիւններում երբեք «չի պարտուել», մշտապէս վերարտադրուել է, ուստի եւ վերոյիշեալ մեխանիզմը չի գործում: Կարող են, հետեւաբար, ընդդիմադիր դառնալու ուրիշ պատճառներ լինել: Երբեմն դրանք միանգամայն անկեղծ են. գալիս է մի պահ, եւ մարդու հայեացքի առաջ ամէն ինչ կարծես պայծառակերպւում է, եւ նա այլեւս չի կարող չտեսնել իշխանութեան արատները՝ այն իշխանութեան, որի մասն էր այդ գործիչը երէկ: Լինում են, իհարկէ, աւելի հետաքրքիր դէպքեր: Օրինակ՝ իշխանութեան ներկայացուցիչը պահանջ է դնում՝ «իմ քուչում միլպետին (կամ դատախազին) ես պիտի նշանակեմ»: Գիտէք, չէ՞, թէ ինչո՞ւ է նա նման պահանջ դնում. որովհետեւ այդ միլպետը կամ դատախազը չափազանց «լաւ աչքով է նայելու» իր բարերարին եւ նրա բիզնեսներին: Եւ ահա, եթէ այդ մարդը մերժում է ստանում, ապա դառնում է բոցավառ ընդդիմադիր եւ աւազակապետութեան դէմ պայքարող անխոնջ մարտիկ:

Բայց բոլոր այդ «անցումային» դէպքերը միաւորում է մի բան. մարդիկ, իշխանութեան մէջ լինելով, չեն տեսնում այն թերութիւնները, որոնք նրանց համար ակնյայտ են դառնում իշխանութիւնից զրկուելուց յետոյ: Իհարկէ, կայ հետեւեալ տրամաբանութիւնը. «Երբ ես էի, ամէն ինչ հրաշալի էր, երբ ես գնացի, ամէն ինչ փճացաւ»: Այդ առիթով կայ նոյնիսկ խորհրդահայկական մի անեկդոտ. Քոչինեանին հանում են Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտօնից, եւ յաջորդ օրը նա գնում է խանութ՝ երշիկ գնելու, ու տեսնում է կիլոմետրանոց հերթը: «Դէ, հիմա Անտոն Երուանդիչի ջանի դադրը կ՚իմանաք»,- եզրակացնում է նախկին ղեկավարը: Այսինքն՝ մարդը հոգեբանօրէն պատրաստ չէ ընդունել, որ իր ժամանակ վիճակը նոյնքան վատ էր, որքան հիմա:

Ես դա յիշեցի ռուսաստանեան վերջին ընտրութիւնների առիթով: Ենթադրենք, Ալեքսեյ Կուդրինը երկու ամիս առաջ կոնֆլիկտ չէր ունեցել Մեդվեդեւի հետ: Մի՞թէ նա այդ դէպքում կը նկատէր, որ այդ ընտրութիւնները անարդար են անցել: Իհարկէ՝ ոչ: Իսկ արդեօք նոյնը չի՞ կարելի ասել Միխայիլ Կասյանովի կամ Բորիս Նեմցովի մասին. եթէ նրանք վարչապետ եւ փոխվարչապետ լինէին՝ արդեօք նրանց այդչափ կը յուզէի՞ն ընտրախախտումները, որքան հիմա են յուզում: Դարձեալ՝ ոչ, որովհետեւ իրենց իշխանութեան ժամանակ էլ էին ճիշտ նոյն որակի ընտրութիւններ անցել:

Նոյնը, իհարկէ, մերոնք: Վստահ եմ, որ Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններից յետոյ Տիգրան Թորոսեանը շատ գրագէտ կերպով կը հիմնաւորի, թէ ինչպէս է կեղծուել ողջ ընտրական պրոցեսը: Բայց աւելի համոզիչ լինելու համար նա պէտք է զուգահեռ անցկացնի 2007 թուականի ԱԺ ընտրութիւնների հետ: Նախկին պաշտօնեաների մօտ հենց այդ զուգահեռներն են պակասում:

«ԱՌԱՒՕՏ»

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ.- «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԱՀԱՎԻԺՈՂ ԵՐԿԻՐ Է»

Ընդդիմադիր Հայոց Համազգային Շարժման վարչութեան նախագահ Արամ Մանուկեանի գնահատմամբ, անցնող տարում Հայաստանում ժողովրդավարութեան մակարդակը ոչ միայն չի բարելաւուել, այլեւ հակառակը, կային լուրջ նախադրեալներ, որպէսզի «էկոնոմիստի» վերլուծաբանները աւելի ցածր գնահատէին մի շարք ոլորտներ:



ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեան

«Մի երկիր, որի 3 տոկոսը ամէն տարի արտագաղթում է, մի երկիր, որի կոռուպցիան 135-րդն է աշխարհում... համեմատելու համար ասեմ, որ 99-ին 75-րդն էր: Այդքան նահանջ ենք ապրել», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց ընդդիմադիր գործիչը: - «Այստեղ ոչ միայն բացարձակ արժէքներն են վտանգաւոր, այլ դինամիկան, որը բոլոր առումներով բացասական է՝ տնտեսական ցուցանիշներով, արտագաղթի, ազատ խօսքի, բանակի վիճակի, կոռուպցիայի հետ կապուած: Բոլոր առումներով Հայաստանը գահավիժող երկիր է»:

Հարցին, թէ այդ դէպքում ինչո՞ւ չի վատթարացել ցուցանիշը, ՀՀՇ վարչութեան նախագահը արձագանքեց, թէ 2008-ից յետոյ էլ տեղ չկայ իջնելու:

Յիշեցնենք՝ «էկոնոմիստ» հանդէսի վերլուծական յաւելուածը անցած շաբաթավերջին նոր զեկոյց է հրապարակել աշխարհի 165 երկրներում ժողովրդավարութեան վերաբերեալ, որտեղ Հայաստանը կրկին դասուել է հիբրիդային ռեժիմ ունեցողների շարքում, եւ գնահատման հինգ չափորոշիչներով՝ ընտրութիւնների արդարութիւնը, բազմակարծութիւնը, կառավարման արդիւնաւէտութիւնն ու հասարակութեան ակտիվութիւնը քաղաքական դաշտում, Հայաստանը ստացել է նոյն գնահատականները, ինչ նախորդ՝ 2010 թուականին:

Ի տարբերութիւն ընդդիմադիր գործչի, իշխող Հանրապետական կուսակցութեան խորհրդի անդամ, Ազգային Ժողովի պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց, որ համաձայն չէ զեկոյցում հնչած գնահատականների հետ, ասաց՝ դրանք սիրողական մակարդակի են: Սահակեանը կարծիք յայտնեց, որ օրինակ արտախորհրդարանական ընդդիմութեան եւ իշխանութեան միջեւ այս տարի ծաւալուած երկխօսութիւնը ժողովրդավարութեան լաւագոյն դրսեւորումն էր:

Նրա կարծիքով, զեկոյցը խորը քաղաքական ենթատեքստեր ունի. - «Որքան կը մօտենան մեր ընտրութիւնները, սիրողական մակարդակի գնահատականները եւ դիլետանտները աւելի կը շատանան, ովքեր կը փորձեն որոշակի խնդիրներ լուծել»:

## ՀՀԿ-Ն ՇՏԱԲ ՉԻ ՁԵՒԱՒՈՐԵԼ. ԱՅԴ ԴԷՊՔՈՒՄ Ո՞ՒՐ Է ԳՆԱՑԵԼ ՅՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԸ

ՀՀԿ-ն ապօրինի կերպով նախընտրական շտաբ է ձեւաւորել այն դէպքում, երբ ընտրական օրէնսգիրքն ասում է, որ համամասնական ընտրակարգով ընտրութիւններին մասնակցող թեկնածուները, կուսակցական դաշինքները ընտրութիւնը նշանակելուց յետոյ միայն կարող են ձեւաւորել նախընտրական շտաբ: Այս մասին, Դեկտեմբերի 19-ին, հրաւիրուած մամուլի ասուլիսում ահազանգեց ՀԱԿ ներկայացուցիչ Ֆելիքս Խաչատրեանը: Սրան ի պատասխան բանավէճին հրաւիրուած ԱԺ ՀՀԿ-ական պատգամաւոր Համլետ Յարութիւնեանը հարցրեց. «Բայց, ո՞վ է ասել, որ նախընտրական շտաբ ենք ձեւաւորել»:



ՀՀԿ-ական պատգամաւոր Համլետ Յարութիւնեան

«Պարոն Յովիկ Աբրահամեանն ասում է, որ բոլոր ճանապարհները տանում են դէպի շտաբ»,- նկատեց Ֆելիքս Խաչատրեանը, սակայն Համլետ Յարութիւնեանը համարեց, որ իրենք դեռեւս շտաբ չունեն:

«Բայց տպաւորութիւն էք ստեղծել, որ շտաբն ունէք, շտաբի պետն ունէք, տեղակալն ունէք: Ի՞նչ է հիմա Յովիկ Աբրահամեանը գործազո՞ւրկ է »,- հարցրեց Ֆելիքս Խաչատրեանը, ինչին Համլետ Յարութիւնեանը պատասխանեց, որ ոչ, գործազուրկ չէ, ԱԺ պատգամաւոր է:

«Յովիկ Աբրահամեանը երեւի գնացել է, դրա համար է նման բան ասել»,- կարծիք յայտնեց Համլետ Յարութիւնեանը: «Ուրեմն խնդրում եմ Յովիկ Աբրահամեանին փոխանցէք Թող Թարգմանի իր միտքը: Հակառակ դէպքում ստացւում է, որ բոլոր ճանապարհները տանում են դէպի Հռոմ: Աւելին՝ հասկացւում է, որ Հռոմը Յովիկ Աբրահամեանի շտաբն է»,- եզրափակեց Ֆելիքս Խաչատրեանը:

## ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊԱՀԱՆՋԵԼ Է ԲԱՑԱՌԵԼ ԴՐԱՄԱՀԱՒԱՔՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը հանդիպել է Երեւանի քաղաքապետարանի ենթակայութեան հիմնական դպրոցների 2 տասնեակ տնօրէնների հետ: Անդրադառնալով դրամահաւաքութեան երեւոյթներին, քաղաքապետը պահանջել է անել հնարաւորը դրանք դպրոցում բացառելու համար: Տարօն Մարգարեանը ընդգծել է, որ դպրոցներում պահանջուող յաւելեալ ծախսերը կարելի է կատարել տնտեսումների հաշուին:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 300 ՏՈԼԱՐ Է

2011 թ. Նոյեմբերի դրութեամբ միջին աշխատավարձը Հայաստանում կազմել է 114.7 հազ. դրամ, որը ներկայիս փոխարժէքով (1տոլար/382 դրամ) 300 տոլար է: Միջին աշխատավարձը 1 տարում աճել է 6.3%-ով:

Պետական սեկտորում միջին աշխատավարձը 92 հազ. դրամ է (240 տոլար), եւ էապէս զիջում է ոչ պետական սեկտորի աշխատավարձին՝ 141 հազ. դրամ (370 տոլար): Նշենք, որ մասնաւոր սեկտորում աշխատավարձի աճն աւելի արագ է, քան պետական սեկտորում:

Թէեւ դրամային արտայայտութեամբ աշխատավարձն աճում է, սակայն տոլարային արտայայտութեամբ՝ նուազում է, պայմանաւորուած դրամի արժէզրկմամբ: Այսպէս՝ Յուլիսին միջին աշխատավարձը 118.3 հազ. դրամ էր (322 տոլար՝ 1 տոլար/367 դրամ փոխարժէքով), Սեպտեմբերին՝ 114 հազ. դրամ (306 տոլար՝ 1 տոլար/372 դրամ փոխարժէքով): Նախորդ տարուայ Նոյեմբերին միջին աշխատավարձը 108 հազ. դրամ էր կամ 299 տոլար:

Նշենք, որ տոլարային գնահատմամբ՝ Հայաստանում միջին ամսական աշխատավարձն իր առաւելագոյն նիշին է հասել 2010 թ. Դեկտեմբերին՝ 379 դոլար:

## ՀԱՅԵՐԻ 87 ՏՈԿՈՍԸ ՉԻ ՀԱՒԱՏՈՒՄ, ՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԻՐ ՇԱՀԵՐԸ

Երեւանում անցկացուած հարցման մասնակիցների 87 տոկոսը չի հաւատում, որ Ազգային ժողովը պաշտպանում է իր շահերը: Այս մասին յայտարարել է Հասարակական-քաղաքական հետազօտութիւնների կենտրոնի ղեկավար Զորիկ Մարտիկեանը, մեկնաբանելով Երեւանում 630 անձանց շրջանում անցկացուած հարցման արդիւնքները (հարցմանը մասնակցածների 54 տոկոսը կանայք են եղել):

Որպէս ամենագլխաւոր դժուարութիւն, հարցուածների 26 տոկոսը նշել է սոցիալական անարդարութիւնը, 24 տոկոսը՝ գործազրկութիւնը, 21 տոկոսը՝ գնաճը, 15,5 տոկոսը՝ արտագաղթը:

Յաջորդ երեք հարցումները կ՚անցկացուեն Յունուարին, Մարտին եւ Ապրիլին: Հետազօտութիւնը կ՚աւարտուի Մայիսին՝ ընտրութիւնների ժամանակ, էքզիթ-փոլով:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՒԵԼԻ ՇԱՏ ՏՂԱՅ Է ԾՆՒՈՒՄ

«Ազգային վիճակագրութեան տուեալներով նկատում ենք, որ մեր հանրապետութիւնում աւելի շատ տղայ է ծնւում, քան աղջիկ, եւ այդ հաւասարակշռութիւնը խիստ խախտուած է», - լրագրողների հետ հանդիպմանն ասաց ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետեանը:

Նրա խօսքով՝ այդ ոչ բնական անհաւասարակշռութիւնը հեռանկարային ազդեցութիւն կ՚ունենայ առանց այդ էլ ոչ բարւոք վիճակում գտնուող ժողովրդագրութեան վրայ, ինչպէս նաեւ կը հանդիսանայ հասարակութեան բացասական տրանսֆորմացիայի արդիւնք:

Գարիկ Հայրապետեանը զուգահեռներ անցկացրեցին Չինաստանի հետ, որտեղ նոյնպէս տղաներն աւելի շատ էին, քան աղջիկները, որը բերեց կրիմինալի աճին, կանանց տրաֆիկինգի աճին եւ այլն:

«Տարեկան 1400 աղջիկ երեխայ չի ծնւում մեր երկրում: Ամենակարեւորը, որ խախտւում է, դա մարդու իրաւունքն է՝ ապրելու իրաւունքը: Սա պրոցէս է , պէտք չէ մեղաւորներ փնտռել, սա արդիւնք է աւանդական եւ զարգացած տեխնոլոգիաներով մտածելակերպերի բախման»,- ասաց Գարիկ Հայրապետեանը:

## ՍԻՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ՄԱՐԻԱՄ ՍՈՒԽՈՒԴԵԱՆԻՆ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է, ՈՐ ՀԵՏԸ ՎԱՏ ԲԱՆ ԿԸ ԼԻՆԻ

Քաջարան այցելութեան ժամանակ Սիւնիքի մարզպետ Սուրէն Խաչատրեանը բնապահպան-ակտիւիստուհի Մարիամ Սուխուդեանին սպառնացել է, թէ «եթէ սուս չմնայ, իր հետ վատ բան կը պատահի»: Այս մասին Դեկտեմբերի 20-ին, անդրադառնալով Քաջարանում ստեղծուած իրավիճակին պատմեց բնապահպան Եղիա Ներսիսեանը յաւելելով, որ Սիւնիքի մարզպետը նաեւ իրեն է սպառնացել:

Եղիա Ներսիսեանը պատմեց, որ Սիւնիքի մարզպետ Սուրէն Խաչատրեանը Քաջարան այցելած բնապահպաններին որպէս թշնամի է դիմաւորել, սակայն քաջարանցիները «դուխով» են դիմադրել մարզպետին, ինչը մինչ այդ չեն արել: «Շատ հետաքրքիր բաներ կան, որոնք ներկայ պահին պաշտօնեաններին կողմից հերքւում են: Բայց բնապահպանները փաստացի տեսանիւթերով շուտով այդ ամէնը ջրի երես են հանելու: Իսկ քաջարանցիները պատրաստ են պատուով պահել իրենց գիւղի անուան նշանակութիւնը՝ քաջ քաջարանցիներ»,- նշեց Եղիա Ներսիսեանը, յաւելելով, որ խօսքը 200 քաջարանցիների մասին է:

## ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՈՐՈՇԵԼ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ՈՒԺԵՐՈՎ ԲԱՑԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Անկարայում վերջերս տեղի է ունեցել տարածաշրջանային զարգացումների գիտաժողով, որին մասնակցել է նաեւ «Այլընտրանք» հետազօտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերեանը: Գիտաժողովի ընթացքում քննարկուել են նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնների զարգացման հիմնախնդիրները:

Ըստ Թ. Մանասերեանի՝ Թուրքիայում կան առաջադէմ մտածող գիտնականներ, որոնք շահագրգռուած են հայ-թուրքական յարաբերութիւնների զարգացմամբ եւ սահմանի բացմամբ: Պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել յաջորդ գիտաժողովը Հայաստանում անցկացնել:

Թ. Մանասերեանի տեղեկացմամբ՝ Միջին Արեւելքի Անկարայի համալսարանն ունի 30 հազ. ուսանող, իսկ համալսարանի ՏՏ կենտրոնի հասոյթը գերազանցում է Հայաստանի ողջ ՏՏ ոլորտի հասոյթին:

## ԼՈՒՐԵՐ

# ԱԱԾ ՂԵԿԱՎԱՐ. «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՒԱՔԱԳՐՈՒԱԾ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ ՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ Է»



*ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան պարգեւներ կը յանձնէ ԱԱԾ ղեկավարներուն*

*Հայաստանի ազգային անվտանգութեան աշխատակիցներն «ԱԱԾ) Դեկտեմբերի 20-ին, նշել են իրենց մասնագիտական տօնը:*

*Օրուայ առթիւ, ԱԱԾ-ում տեղի է ունեցել հանդիսաւոր նիստ, ուր ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի ուղերձը ներկայացրել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը: Ուղերձում, շնորհաւորելով Ազգային անվտանգութեան աշխատակիցներին, ՀՀ Նախագահը պատգամել էր «շարունակել յաղթահարել բոլոր դժուարութիւնները եւ պատուով լուծել հետախուզութեան, հակահետախուզութեան, սահմանադրական կարգի պահպանութեան, ահաբեկչութեան դէմ պայքարի, պետական սահմանի պահպանութեան խնդիրները՝ համարժէք արձագանքելով առկայ մարտահրաւէրներին»:*

*Հանդիսաւոր նիստին ելոյթ ունենալով, ԱԱԾ տնօրէն գեներալ-գնդապետ Գ. Յակոբեանը նշել է, որ մասնագիտական տօնը ԱԱԾ անձնակազմը դիմաւորում է գործունէութեան ոլորտներում արձանագրուած ակնառու ձեռքբերումներով: Ելոյթում գեներալ-գնդապետ Գ. Յակոբեանը յատուկ ընդգծել է Ադրբեջանի հետախուզութեան կողմից Թուրքիայում հաւաքագրուած Հայաստանի քաղաքացիներ հանդիսացող գործակալների բացայայտումը: Անվտանգութեան ծառայութեան հակահետախուզութեան գլխաւոր վարչութեան աշխատակիցները այդ անձանց օպերատիւ մշակումները իրականացրել են յատուկ ծառայութիւնների գործելաոճի դասական կանոններով, օպերատիւ հնարքների ճկուն եւ հնարամիտ կիրառմամբ, ապահովելով լրտեսական գործունէութեան սպառիչ, ամբողջական եւ անհերքելի ապացոյցների ստացում: ԱԱԾ տնօրէնի հաւաստմամբ, կատարուած աշխատանքների բարձր պրոֆեսիոնալիզմը պատիւ կը բերէր ցանկացած երկրի յատուկ ծառայութեանը:*

*ԱԱԾ տնօրէն Գ. Յակոբեանը շնորհաւորելով աշխատակիցներին քաջառողջութիւն, ուժ, եռանդ ու յաջողութիւն մաղթելով, նաեւ նշել է, որ «Հայաստանի յատուկ ծառայութիւնները գոյութիւն ունեն արդէն 91 տարի: Հայաստանի երեք հանրապետութիւնների ժամանակ էլ նրանք գործել են Հայրենիքի անմնացորդ նուիրումով, երկրի յաջող ապագայի հաւատքով, պետութեան կայացման դժուարին ճանապարհի ձեռքբերումները պահպանելու, բազում նոր յաջողութիւններով ամրագրելու մղումով: Համոզուած եմ, որ կ՚անցնեն շատ տարիներ, սակայն մեզ յաջորդող սերունդները նոյն հպարտութեամբ, ոգեւորութեամբ եւ արժանապատիւօրէն կը շարունակեն տօնել այս օրը, հաւատարիմ կը մնան մեր պատգամներին, կը կարողնան պահպանել անցած դժուարին ճանապարհի ձեռքբերումները, եւ ի զօրու կը լինեն մեր երկրին ու ժողովուրդը զերծ պահել հնարաւոր վտանգներից ու սպառնալիքներից»:*

# ԵՄ-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՈՐՈՇՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼ

*Եւրոպական միութեան խորհուրդը Դեկտեմբերի 19-ին որոշում է ընդունել՝ լիազօրելով Եւրոպական յանձնաժողովին սկսել ռեադմիսիայի, ինչպէս նաեւ մուտքի արտօնագրերի տրամադրման դիւրացման համաձայնագրերի շուրջ բանակցութիւնները Հայաստանի հետ:*

*Երբ Յանձնաժողովը Հայաստանի հետ բանակցութիւնները աւարտուած ճանաչի, Եւրոպայի խորհուրդը՝ ձայների որակեալ մեծամասնութեամբ պէտք է որոշում ընդունի համաձայնագրերի ստորագրման եւ կնքման վերաբերեալ, այնուհետեւ դրանք պէտք է ստանան Եւրոպական խորհրդարանի համաձայնութիւնը:*

*Յիշեցնենք, որ Եւրոպական յանձնաժողովը սոյն թուականի սեպտեմբերի 19-ին հանդէս եկաւ Եւրոպական միութեան եւ Հայաստանի միջեւ կարճաժամկէտ վիզաների տրամադրման, ինչպէս նաեւ անօրինական միգրանտների ռեադմիսիայի համաձայնագրերի շուրջ բանակցութիւններ սկսելու առաջարկութեամբ:*

*Հայաստանի հետ ռեադմիսիայի եւ մուտքի արտօնագրերի տրամադրման դիւրացման վերաբերեալ բանակցութիւնները հետեւում են մարդկանց միջեւ շփումների բարելաւման վերաբերեալ 2009 թուականի Մայիսին կայացած Պրահայի Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովի քաղաքական յանձնառութիւններից:*

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ



*ՀԱՊԿ-ի անդամ երկիրներու ղեկավարները Մոսկուայի հանդիպումի ընթացքին*

*Աշխատանքային այցով Մոսկուայում գտնուող Նախագահ Սերժ Սարգսեանն Դեկտեմբեր 20-ին մասնակցել է Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) Հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանին:*

*Նստաշրջանը մեկնարկել է ՀԱՊԿ անդամ պետութիւնների ղեկավարների նեղ կազմով հանդիպմամբ, որին յաջորդել է ընդլայնուած կազմով հանդիպումը: ՀԱՊԿ-ում նախագահութիւնը Բելառուսից փոխանցուել է Ղազախստանին:*

*Հայաստանի Նախագահի մամլոյ գրասենեակի հաղորդմամբ, տեղի է ունեցել նաեւ համատեղ փաստաթղթերի ստորագրման արարողութիւնը: Ստորագրուել է թիւով 23 փաստաթուղթ, որոնք միտուած են հաւաքական անվտանգութեան համակարգի կատարելագործմանը, կազմակերպութեան ներուժի մեծացմանը, ռազմական ու ռազմատնտեսական համագործակցութեան խորացմանը:*

*Նստաշրջանում որոշումներ են ընդունուել ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի յատուկ ստորաբաժանումների վերազինման, տեղեկատուական անվտանգութեան ապահովման համակարգի ձեւաւորման, թմրանիւթերի ապօրինի շրջանառութեան ու ահաբեկչութեան դէմ պայքարի, Աֆղանստանի տարածքից եկող սպառնալիքներին եւ մարտահրաւէրներին հակազդելու ընդհանուր միջոցառումների վերաբերեալ:*

*Փոփոխութիւններ են կատարուել ՀԱՊԿ կանոնադրութեան մէջ, նպատակ ունենալով աւելի նպաստել կազմակերպութեան ներքին ինստիտուցիոնալ ամրապնդմանը: Ընդունուել է նաեւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի ստորագրման 20-ամեակը եւ ՀԱՊԿ հիմնադրման 10-ամեակը 2012 թուականին նշելու միջոցառումների ծրագիրը:*

*Սերժ Սարգսեանի մամլոյ գրասենեակը նաեւ տեղեկացնում է, որ Հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանից յետոյ նախագահը կը մասնակցի ԱՊՀ մասնակից պետութիւնների ղեկավարների նիստին:*

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ 64.4%-Ը ԻՐ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՈՒԶՈՒՄ Է ՍՏԱՆԱԼ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

*2012թ. կէսերին կառավարութեան կողմից ընդունուելու է նոր ռազմավարութիւն՝ հայ երիտասարդին յուզող բոլոր խնդիրների լուծում տալու համար: Այդ ռազմավարութիւնը հիմնուելու է հետազօտութիւնների վրայ, որոնք ընթանում են հիմա եւ աւարտուելու են 2012թ. փետրուարին, այս մասին լրագրողներին յայտնեց ՀՀ Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի փոխնախարար Արսէն Քարամեանը:*

*Նոր հետազօտութիւններին մասնակցել են 1200 երիտասարդ՝ տարբեր դեմոգրաֆիկ խմբերից:*

*Փոխնախարարը կարեւորեց այն, որ հարցուած երիտասարդների 47.1%-ը տանը ունեն ինտերնետ կապ: 99.6%-ը ունի բջջային հեռախօս, որոնց մեծ մասը կարողանում է օգտուել ինտերնետից: 37.6 %-ը անգլերէնին չեն տիրապետում, եւ միայն 17.6%-ն են լաւ տիրապետում այդ լեզուին: 22.2 %-ն էլ գեղարուեստական գրականութիւն ընդհանրապէս չեն կարդացել դպրոցում:*

*Հարցումը ցոյց է տուել նաեւ, որ երիտասարդների 64.4%-ը իր կրթութիւնը ուզում է ստանալ արտերկրում, ինչը նախարարի գնահատմամբ՝ լուրջ միգրացիոն վտանգ է ենթադրում:*

*Ընտանեկան հարցերի մասին ամենատարածուած դիրքորոշումներն են այն, որ կինը անպայման պէտք է աշխատի , նոյնիսկ եթէ ամուսնու աշխատավարձը շատ բարձր է: Երկրորդ ամենատարածուած դիրքորոշումն այն է, որ երիտասարդ ընտանիքը պէտք է ապրի առանձին:*

*«Կանայք ու աղջիկները աւելի ընկալողունակ են փոփոխութիւններին հանդէպ, քան տղաները: Մինչեւ 30 տարեկան կանայք շատ աւելի ազատ մտածելակերպ ունեն, քան տղաները»,- եզրակացնում է Ա. Քարամեանը:*

*Հարցուածների 47.8%-ը միայն աշխատանքով է ապահովուած: «35.7%-ը քաղաքական զարգացումներով չեն հետաքրքրւում: Սա ցոյց է տալիս, որ չափազանցուած է այն տեսակէտը, թէ մեր հասարակութիւնը քաղաքականացուած է: Հասարակական ինստիտուտների հանդէպ երիտասարդները ամենաշատը վստահութիւն ունեն Հայ առաքելական եկեղեցու եւ հայոց բանակի հանդէպ»,- եզրափակեց փոխնախարարը:*

# ՌԱՊԸՐԹ ՖԻՍՔ: ԹՈՒՐՔԵՐԸ ԳԻՏԵՆ 1915-Ի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ



*«Ինտիփենտընթ» թերթի թղթակից Ռապըրթ Ֆիսք*

*Յայտնի անգլիացի լրագրող եւ Միջին Արեւելքի մասնագէտ Ռապըրթ Ֆիսք «Ակօս» շաբաթաթերթի հետ հարցազրոյցի ընթացքին կ՚ըսէ, թէ նոր Թուրքիան Հայկական ցեղասպանութիւնը պիտի յաջողի ճանչնալ: Ըստ Ֆիսքի՝ Թուրքիան այս հարցին դէմ հանդիման գալու համար 30 տարի առաջ աւելի աչխոյժ եւ ինքնավստահ էր:*

*«Ինտիփենտընթ» թերթի թղթակից՝ երկար տարիներ Լիբանան ապրած եւ Միջին արեւելքի հարցերուն լաւատեղեակ Ռ. Ֆիսքի անդրադարձած է իր 2005 թուականին լոյս տեսած «Մեծ Պատերազմ Քաղաքակրթութեան համար. Միջին Արեւելքի Նուաճումը» գիրքի 24 գլուխներէն մէկուն՝ Հայկական ցեղասպանութեան վերաբերող բաժինին: Ան այսօրուան Թուրքիոյ մասին իր համոզումները կիսելով «Ակօս»ի հետ յայտնած է, որ Թուրքերը հայոց ցեղասպանութեան իրականութիւն ըլլալու մասին շատ կասկածներ ունին: Բայց ամէն անգամ, որ Թուրքիա այցելեմ շատերու հարց կու տամ Հայկական Ցեղասպանութեան մասին եւ կը տեսնեմ, որ շատ շատեր սկսած են համոզուիլ Ցեղասպանութեան իրողութեան հետ: Անոնցմէ շատեր նոյնիսկ կը յայտնեն, թէ իրենց մեծ հայրը կամ մեծ մայրը հայ եղած է: Վերջիններս խսլամութիւնը ընդունելով կրցած են իրենց կեանքը փրկել: Այսպիսով հազարաւոր Թուրքեր կիսով հայ կը համարուին: Թուրքերը այս բոլորը պէտք է գիտնան, որովհետեւ Ցեղասպանութեան պատմութիւնը ոչ միայն հայերուն պատմութիւնն է, այլեւ Թուրքերուն: Անոնք պէտք է գիտնան իրենց պատմութիւնը:*

*Իսկ ինչո՞ւ ժխտումի քաղաքականութիւնը կը շարունակուի հարցումին Ռապըրթ Ֆիսք կը պատասխանէ, որ Թուրքերը կը վախնան, որ եթէ ընդունին Հայկական Ցեղասպանութիւնը իրենք իբրեւ ժողովուրդ եւ պետութիւն պիտի արժեզրկուին, որ ըստ ինծի սխալ է: Պատմութիւնը ցոյց տուաւ, որ շատ պերութիւններ ընդունեցին իրենց գործած յանցագործութիւնները՝ Անգլիան Իրլանտայի նկատմամբ, Գերմանիան հրէաներու նկատմամբ, Ուքրանիան Փոլոնիայի նկատմամբ եւայլն:*

# 2011Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿ ՃԱՆՉՑՈՒԵՑԱՒ ՌՈՄԱՆ ԱՄՈՅԵԱՆ


*Հայաստանի 2011ի լաւագոյն մարզիկ Ռոման Ամոյեան*

*Մարզական լրագրողներու հանրապետական դաշնութեան հարցման արդիւնքներով՝ որոշուեցան մրցաշրջան 2011ի տասը լաւագոյն մարզիկները: Հարցման մասնակցած են զանգուածային լրատուամիջոցներու 42 ներկայացուցիչներ: Իբրեւ արդիւնքով Հայաստանի լաւագոյն մարզիկ ճանչցուած է Եւրոպայի յունահռոմէական ըմբշամարտի ախոյեան Ռոման Ամոյեան:*

*Ստորեւ կը ներկայացնենք 10 լաւագոյններու անուանացանկը.*

*1. Ռոման Ամոյեան ըմբշամարտ 346*

*2. Արսէն Ճուլֆալաքեան ըմբշամարտ 300*

*3. Լեւոն Արոնեան ճատրակ 296*

*4. Հենրիկ Մխիթարեան ֆութպոլ 237*

*5. Աղասի Աղասեան ծանրամարտ 151*

*6. Արթուր Ալեքսանեան ըմբշամարտ 145*

*7. Եուրա Մովսիսեան ֆութպոլ 140*

*8. Յարութիւն Մերտինեան մարմնամարզութիւն 129*

*9. Վլատիմիր Սարուխանեան բռնցքամարտ 124*

*10. Մուսա Մուրթազալիեւ ազատ ըմբշամարտ 111*

*Լաւագոյն խումբ ճանչցուած է աշխարհի ախոյեան, Հայաստանի ճատրակի տղամարդոց հաւաքականը: Անոր կը յաջորդեն ֆութպոլի եւ յունահռոմէական ըմբշամարտի ազգային հաւաքականները:*

*Մարզական լրագրողները հարցաթերթիկներուն մէջ նշած են եւս 14 մարզիկներու անուններ. սամպիստներ՝ Վաչիկ Վարդանեան, Յակոբ Առաքելեան, ծանրորդներ՝ Արայիկ Միրզոյեան, Հռիփսիմէ Խուրշուտեան, ֆութպոլիստներ՝ Ռոման Փերեզովսկի, Քաւլեն Մկրտչեան, շախմատիստներ՝ Էլինա Դանիէլեան, Վլատիմիր Յակոբեան, Գաբրիէլ Սարգսեան, Սերգէյ Մովսիսեան, նաւաձեւաւորող՝ Հրաչեայ Շահազիզեան, բռնցքամարտիկ՝ Արմինէ Սինապեան, յունահռոմէական ոճի ըմբիշ՝ Եուրի Փաթրիքէեւ, հրաձիգ՝ Նորայր Բախտամեան:*

# ՖԱՍԻԷ. «ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԼՈՒԾՈՒԵԼ ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՒԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ»

*Շարունակուած էջ 1-էն*

*տեմբերը, երբ մշակուեցան այդ սկզբունքները, համանախագահները գործունէութեան միասնական ծրագիր ընդհանրապէս չունէին», - ըսած է Ֆասիէ:*

*Պեռնար Ֆասիէ խոստովանած է, որ միջնորդներու հիմնական յոյսերը կապուած էին Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի նախագահներու, այս տարուայ Յունիսին Կազանի մէջ կայացած եռակողմ հանդիպման հետ: «Ցաւոք սրտի, մեր այդ յոյսերը չարդարացան», - ըսած է Ֆասիէ:*

*Պեռնար Ֆասիէ բաւական յոռետեսօրէն տրամադրուած է Ղարաբաղեան հարցի լուծումը միջազգային այլ ատեաններ տեղափոխելու հեռանկարներուն վերաբերեալ: «Չեմ կարծեր, որ Ղարաբաղեան հակամարտութեան նման խնդիրները կարելի է լուծել ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհրդի բանաձեւերու միջոցով՝ առանց կողմերու ցանկութեան եւ փոխզիջումներու դիմելու պատրաստակամութեան: Եթէ ՄԱԿ-ի բանաձեւերով ըլլար, ապա Իսրայէլի եւ Պաղեստինի հակամարտութիւնը շատոնց արդէն լուծուած կ՚ըլլար», - շեշտած է ֆրանսացի դիւանագէտը:*

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՍՈՒԱԾ Է 111-ՐԴԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 1-էն*

*կիրներ, խառնածին վարչաձեւի երկիրներ, մենատիրական վարչաձեւի երկիրներ:*

*Լիարժէք ժողովրդավարութեան երկիրներու խումբին մէջ այս տարի, ընդհանուր առմամբ, դասուած է 25 երկիր: Ոչ լիարժէք ժողովրդավար երկիրներու շարքին դասուած է 53 երկիր, խառնածին վարչաձեւի երկրներու շարքին՝ 37 երկիր, իսկ մենատիրական վարչաձեւի երկիրներու խումբին մէջ դասուած է 52 երկիր:*

*Այս տարի աշխարհի ամենաժողովրդավար երկիրը ճանչցուած է Նորվեկիան: Լաւագոյն տասնեակին մէջ յայտնուած են նաեւ Իսլանտան, Դանիան, Շուէտը, Նոր Զելանտան, Աւստրալիան, Զուիցերիան, Գանատան, Ֆինլանտան եւ Հոլանտան: Վերջին՝ 167-րդ դիրքը կը գրաւէ Հիւսիսային Քորէան:*

*Ցուցակին մէջ Հայաստան ընդգրկուած է խառնածին վարչաձեւի երկիրներու շարքին, որ կը սկսի 79-րդ դիրքէն:*

*Ժողովրդավարութեան մակարդակը Հայաստանի մէջ 10 միաւորանոց համակարգով (10 միաւորը ցոյց կու տայ բարձրագոյն դրական արդիւնքը, 0 միաւորը՝ ամէնէն ցածը)՝ գնահատուած է 4,9 միաւորով, ընտրական գործընթացի եւ բազմակարծութեան մակարդակը՝ 4,33 միաւորով, կառավարութեան գործունէութեան մակարդակը՝ 3,21 միաւորով, քաղաքական մասնակցութեան մակարդակը (շարք մը ցուցանիշներ այստեղ հաշուի առնուած են՝ ընտրութիւններուն մարդոց մասնակցութեան մակարդակը, կանանց ներգրաւուածութիւնը խորհրդարանին մէջ, քաղաքացիներու ազատ կերպով ցոյցեր ու հանրահաւաքներ իրականացնելու իրաւունքը) 3, 89 միաւոր, քաղաքական մշակոյթի մակարդակը՝ 3,13 եւ քաղաքացիական ազատութիւններու մակարդակը 5,88 միաւոր:*

*2010-ին Հայաստան կը զբաղեցնէր 109-րդ դիրքը:*


ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.

Name: ------------------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: ------------
Tel :----------------------- Fax : ------------------------

# ԵՐԿՈՒ ՉԱՓԱՆԻՇ ԿԱՄ (DOUBLE STANDARD)

*ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ*

1974 Թուականի Դեկտեմբերին, Պէյրութի Հայկ Ակումբի սրահին մէջ, տեղի ունեցաւ Լիբանանի մէջ Ապրիլեան Եղեռնի Վաթսունամեակի (1975) Տօնակատարութիւնը հովանաւորող Համազգային Կեդրոնական Վարչութեան ընդլայնուած ժողովը, որուն ներկայ էին մեր ազգային երեք կուսակցութեանց ներկայացուցիչները եւ Պէյրութահայ երեւելի անձնաւորութիւններ:

Ինծի ալ տրուած էր ճաճոյքն ու պատիւը մասնակցելու այդ ժողովին: Ժողովի համադրումը կը կատարէր Մեծր Հրաչեայ Սեդրակեան, որ պարզելէ ետք ժողովին նպատակը, եւ համազգային մակարդակով կատարուելիք աշխատանքներուն ընդհանուր պատկերը, հրաւիրեց ներկաները որ իրենց կարծիքներն ու առաջարկները տան այդ առթիւ:

Կը յիշեմ որ խօսք առին այն ատեն, Տոքդ. Երուանդ Ծիտէճեանն ու Տոքդ. Եղիկ Գոնեալեանը, եւ մի քանի ուրիշներ: Վերջին խօսք առնողը եղայ ես, տակաւին նորահաս երիտասարդ փաստաբան որ աշխարհի դատերը պաշտպանելու խաբկանքը կ՚ապրէր, երբ իրենց ուշադրութեան յանձնեցի, զարմանքը շարժելով ներկաներուն, ժողովի աննկատողութիւնը Պաղեստինեան Դատի զօրակից կանգնելու հարցին առընչութեամբ: Ըսի թէ ինչպէ՞ս կարելի էր աշխարհին ներկայանալ եւ արդարութիւն պահանջել անկէ մեր Հայ Դատին համար, երբ մենք նստած Արաբական ամենէն ազատամիտ մայրաքաղաք Պէյրութի մէջ, կը մոռնանք կամ կ՚անգիտանանք նշում ընել Արաբական ամենէն Սրբազան Դատին՝ Պաղեստինեան Դատին նկատմամբ:

Երկու չափանիշ (Double Standard) պէտք չէ ունենանք ըսի, որպէսզի Թուրքի հետ բարեկամութիւն դաւանող երկիրներուն կամ ազգերուն նման չդառնանք, որոնք իրենց շահերէն մեկնած, կ՚անտեսեն կամ պաշտօնապէս չեն ընդունիր Հայկական Ցեղասպանութիւնը:

Ճիշդ ես ըսին ինծի, այն ատեն, ներկաներէն շատեր, եւ ԲԱՑՑ ըսելով երկա՜ր պատճառաբանութիւններ տուին: Կարելի իրենք բան մը գիտէին, յաջորդ տարուոյն (1975) Ապրիլ ամսուն բռնկած Լիբանանի քաղաքացիական կռիւներուն մասին ......... որ ես, որպէս անփորձառու իտէալապաշտ, չէի գիտեր:

Այսօր ալ, երբ կը զրուցեմ կարգ մը բարեկամներու հետ, քաղաքական կամ ոչ-քաղաքական տարբեր նիւթերու մասին, միշտ ԲԱՑՑ-ը եւ ՍԱԿԱՅՆ-ը կը լսեմ անոնցմէ, երբ դիրքորոշուելու յստակ պատճառաբանութիւններ կը տրուի իրենց:

Գիտեմ որ շատ բան կեանքի մէջ յարաբերական (Relative) է եւ չկայ որեւէ բան որ բացարձակ (Absolute) կարելի է նկատել:

Բայց երբ որեւէ հարցի մը նկատմամբ դիրքորոշուելու կարիքը կայ, եւ չէզոք կենալը արդարութիւն չբերեր անձի մը գիտակցութեան մակարդակին, մարդ պէտք է ուղղուի կարելիութիւններու նժարով (Balance of Probabilities) հասնելու համար առողջ եւ անկողմնակալ (Unbiased) կարծիքի, եւ ըստ այնմ իր ճիշդ ուղղութիւնը կամ որոշումը առնէ կամ տայ:

Յաճախ մեր շահախնդրութեան պատճառաւ, կուսակցական, կրօնական կամ հաւատածական նժարով կը կշռենք դէպքերն ու եղելութիւնները, եւ կը շեղինք իրականութիւնը ճանչնալէ, եւ կամօրէն մենք զմեզ «նախօրօք ճշդուած» պատկերը դիտելու վիճակի կ՚ենթարկենք կամ այդ վիճակի մէջ կը դնենք:

Երբեմն ալ կուրօրէն հետեւելու նկարագրային տկարութենէն մեկնած, թութակի պէս կը կրկնենք զօրաւորին կամ իշխանաւորին քարոզչութեամբ հրապարակ նետուած գաղաբարները, որոնք կը ծառայեն միայն անոնց որոնք մեզ կը գործածեն կամ կը շահագործեն: վերոյիշեալ նկատողութիւնները կամ վերլուծումները ընելով, կ՚ուզեմ յիշել կարգ մը երկու չափանիշ (Double Standard) ունեցող երեւոյթներ:

Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնը երկու տարբեր նժարներով կը կշռէ ազատութեան եւ ժողովրդավարական սկզբունքներու խախտումը աշխարհի մէջ:

Բարեկամ երկրի մը բռնապետութիւնը կ՚անտեսուի եւ ոչ- բարեկամ երկրի յար եւ նման ընթացքը կը քննադատուի:

Պաղեստինցի անիրաւուած ժողովուրդին իրաւունքները անվերջ եւ անարդար պատճառաբանութիւններով շարունակաբար կ՚ոտնակոխուի, մինչ Թիպէթի Տալա Լաման եւ յաջորդները որպէս ազատագրական պայքարի հերոսներ պետական մակարդակով կ՚ընդունուին եւ կը պատուըուին:

Հրէական Ողջակիզումի (Holocaust) յարգանքի եւ նշումի կեդրոն Իսրայէլ, կը շարունակէ պաշտօնապէս չճանչնալ Հայկական Ցեղասպանութիւնը:

Լիբանանի ազատ գրչի եւ խօսքի եւ անկաշկանդ քաղաքական ապրելակերպի մթնոլորտին մէջ ապրող բախտաւոր հայեր եւ ոչ-հայեր, որոնց ապրելաձեւը եւրոպական եւ արեւմտեան չափանիշներով կարելի է նկարագրել, զարմանալի ընթացքով զինակցած են այսօր այդ աննման ազատութիւնը, անկախութիւնն ու ազատ գրչի եւ խօսքի արտայայտութիւնը կաշկանդող ուժերու հետ:

Երկու նժար եւ երկու չափանիշ ունեցող մարդիկ տակաւին ջիղը ունին որ ուրիշը միամիտ նկատեն եւ անոր խելք տալու ելլեն:

Ինչպէ՞ս կարելի է գործէ արձակուած պաշտօնեայի մը խրատել որ ան իր ձայնը տայ կամ քուէարկէ թեկնածուի մը որ իր իսկ գործատէրին ընթացքը կը քաջալերէ կամ կ՚ընդունի:

Ինչպէ՞ս կարելի է Հայու բարեկամ նկատուող քաղաքական գործիչի հետ ըլլալ, որովհետեւ ան Հայկական Ցեղասպանութեան ի նպաստ կը քուէարկէ, երբ նոյն այդ գործիչը իր քաղաքական ընթացքով եւ գործունէութեամբ, քու մարդկային ամէնօրեայ ապրուստին եւ ընկերային ապահովութիւն ընծայող ամէնակենսական իրաւունքներուդ վնաս հասցնելու կ՚աշխատի, իր իտէալապաշտ պահպանողական կեցուածքով:

Երկու չափանիշ կամ Double Standard կիրարկող մարդիկ պատ-

Շար.ը էջ 18



# «ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏՈՎ ԱՊՈՒՇԱՑԵԼ ԵՆՔ»
## ԱՍՈՒՄ Է ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆԸ

*Վերջերս Գիւմրին դարձել է ամենաքննարկուող քաղաքներից մէկը, եւ պատճառը ոչ միայն քաղաքապետ Վարդան Ղուկասեանի քարուքանդ տնակների ֆոնի վրայ կառուցած շքեղ հիւրանոցն է կամ էլ գերեզմանոց տանող ճանապարհի վրայ ԱԺ ԲՀԿ-ական պատգամաւոր Մարտուն Գրիգորեանի հօրեղբօր որդու հիմնած գիշերային ակումբը՝ ուքրաինացի մերկապարուհիներով, այլ քաղաքում տեղի ունեցող ինքնասպանութիւններն ու 10-ամեայ աղջկան բռնաբարելու դէպքը: Թէ որն է պատճառը, որ Գիւմրին այսքան անտեսուած ու լքուած է երկրի բարձրաստիճան պաշտօնեաների կողմից (ոչ պաշտօնական տուեալներով՝ Գիւմրիում ընդամէնը 70 հազար մարդ է մնացել), եւ ինչո՞ւ անգամ Դեկտեմբերի 7-ին նրանք չցանկացան գիւմրեցիների հետ գոնէ մի քանի ժամ անցկացնել, այս հարցերի շուրջ «Առաւօտը» զրուցեց Շիրակի հոգեւոր թեմի առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանի հետ:*



Շաբաթուայ ամենաթարմ դէպքի՝ գիշերօթիկ դպրոցի 10-ամեայ աղջկան բռնաբարելու դէպքի կապակցութեամբ սրբազանից հետաքրքրուեցինք, թէ ինչ պատժի կարելի է արժանացնել 25-ամեայ մանկապիղծ Վարդան Ղազարեանին: Սրբազանը յիշեց 20 տարի առաջ Գիւմրիում կատարուած մանկապղծութեան մէկ այլ դէպքի մասին, երբ գիւմրեցիները 7-ամեայ աղջկան բռնաբարողին խարոյկի վրայ այրեցին՝ Լինչի դատաստանի ենթարկեցին: Ըստ նրա՝ այս հարցում իր մէջ կռւում են հոգեւորականն ու սովորական մարդը, եւ եթէ որպէս հոգեւորական՝ ինքը դէմ է մահապատժին, ապա որպէս սովորական մարդ՝ մտածում է միւս գիւմրեցիների նման, այն է՝ մանկապիղծն արժանի է ծայրահեղ պատժի: Վերջին շրջանում Շիրակի մարզում մէկը միւսի հետեւից կատարուող ինքնասպանութիւնների հարցում էլ սրբազանը նաեւ իր մեղքի բաժինն է տեսնում: «Գուցէ եւ ինքնասպանութիւնների պարագայում ինչ-որ գործ կատարել ենք, որը չի երեւում, որովհետեւ հիմա դուք ունենք վիճակագրական տուեալներ, թէ ինչքան ինքնասպանութիւն եղաւ, բայց թէ ինչքան մարդ ինքնասպանութիւնից հետ կանգնեց եկեղեցու քարոզչութեան եւ աշխատանքի շնորհիւ՝ այդ վիճակագրութիւնը չկայ: Իսկ ինքնասպանութիւնների քանակն իրօք մտահոգիչ է, մենք չենք կարող ուրախանալ փրկուածներով, մենք պիտի տխրենք նրանցով, որոնք այդ քայլին են դիմել, վերջիվերջոյ՝ իւրաքանչիւր հոգու համար եկեղեցին պատասխանատու է Աստծոյ առջեւ, եւ ես, որպէս թեմի առաջնորդ, պատասխանատու եմ իմ հօտի համար Աստծոյ առջեւ, եւ ցանկացած ինքնասպանութեան պարագայում ես ինձ մեղաւոր ու տկար եմ զգում: Ցաւօք, այսօր այդ հնարաւորութիւնը չկայ իմանալու, թէ ով է գտնւում այնպիսի դէպրեսիւ վիճակում, որ կարողանաս գնալ եւ օգնել»,- ասում է սրբազանը:

Ըստ նրա՝ ինքնասպանութիւնները ճիշտ չէ կապել քաղաքի սոցիալական ծանր վիճակի հետ, քանի որ բարեկեցիկ երկրներում էլ ինքնասպան լինողների թիւը քիչ չէ, այն հոգեւոր ճգնաժամի հետեւանք է: Ինչ վերաբերում է հանրապետութեան բարձրաստիճան պաշտօնեաների կողմից Գիւմրիի անտեսուած լինելուն, սրբազանը հեգնանքով պատասխանեց. «Բա ասում են ուշադրութեան կենտրոնո՞ւմ ենք»: Մեր յիշեցմանը, թէ բարձրաստիճան պաշտօնեաները նոյնիսկ Դեկտեմբերի 7-ին չբարեհաճեցին Գիւմրի գալ ու երկրաշարժի զոհերի յիշատակին նուիրուած պատարագի մասնակցել, Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանն ասաց. «Ո՞նց, վարչապետը եկաւ, բայց, աղջի՞կս, նոյնիսկ եթէ Դեկտեմբերի 7-ին ամբողջ վերնախաւը գայ, դրանով բան չի փոխուի, եթէ Դեկտեմբերի 7-ին նոյնիսկ չգան, դա չի նշանակում, թէ մոռացուած ենք: Քաղաքը Դեկտեմբերի 7-ից Դեկտեմբերի 7-ը չպիտի յիշուի, թող այդ օրը չգան, բայց մնացած 364 օրը մտածեն մեր քաղաքի մասին, բայց կարող է Դեկտեմբերի 7-ին գան, մնացած 364 օրը մոռանան այս քաղաքի գոյութեան մասին: Գալը չափանիշ չէ: Մեր քաղաքը յիշում են էն չափով, որ չափով յիշում են, ես ինքս էլ ասում եմ, որ Շիրակը ամենամոռացուած ռեգիոնն է՝ բոլոր առումներով. ես չեմ կարող բացատրել՝ ինչու: Բայց, ցաւօք, այդպէս է»: Ըստ նրա՝ «Հայաստան» հիմնադրամը 20 տարի շարունակ լաւ գործեր է անում, բայց մոռանում է, որ մեր երկիրը միայն ԼՂՀ-ով չի սահմանափակւում: «Հիմա եթէ խօսեմ, կ՚ասեն՝ սրբազանը Ղարաբաղի դէմ է խօսում, բայց ես Ղարաբաղի դէմ չեմ խօսում, բայց ինչ-որ բան էլ պիտի արուի Շիրակի համար, չէ՞: Անշուշտ, արւում էլ է, բայց մենք կարծես փակուղում ենք յայտնուել, այնպէս որ՝ ես կարծում եմ ամենամոռացուածն ենք՝ բոլոր առումներով»,- նեղսրտեց սրբազանը:

Վերջերս անցկացուած մարդահամարի տուեալները դեռ չեն հրապարակուել, սակայն Գիւմրիում խօսակցութիւններ են պտտւում, որ այս քաղաքում բնակիչների փաստացի թիւը 70 հազար է: «Ես համաձայն եմ, որ Գիւմրիում այսօր 100 հազարից պակաս բնակիչ կայ, չէի ասի՝ 70 հազար, բայց 80-100 հազարի սահմաններում, ըստ իս, կը լինի բնակչութիւնը: Հիմա կարդացող որոշ գիւմրեցիք կ՚ասեն՝ տե՛ս, քաղաքի դէմ է խօսում, չի սիրում էս մարդը էս քաղաքը (ակնարկում է Գիւմրիի քաղաքապետին,- Ն. Ա.), բայց իրականութիւնն է այդպիսին, որ 100 հազարից պակաս է բնակչութիւնը: Ես 2 անգամ ասել եմ, ինձ հակաճառել են, թէ այդպիսի բան չկայ, 150 հազար է, դուք որտեղի՞ց էք տիրապետում այդ տուեալին եւ այլն, եւ այլն: Բայց ես մի բան գիտեմ. աշակերտութիւնը 12 տարի առաջ 25 հազար էր, այսօր 17 հազար է, եթէ 8 հազարով պակասել է աշակերտութեան թիւը, նշանակում է՝ 40 հազարով պակասել է բնակչութեան թիւը»,- համոզուած է սրբազանը՝ կարծելով, որ արտագաղթից միակ փրկութիւնը սոցիալական արդարութեան վերականգնումն է:

Շիրակի հոգեւոր ղեկավարից հետաքրքրուեցինք նաեւ քաղաքում յայտնուած գիշերային ակումբների ու քաղաքապետ Վարդան Ղուկասեանի շքեղ հիւրանոցի մասին: Աղքատ քաղաքում այդպիսի հիւրանոց կառուցելը Տ. Միքայէլ Եպս. Աջապահեանը բարոյականութեան խնդիր է համարում, իսկ ԱԺ պատգամաւոր Մարտուն Գրիգորեանի հօրեղբօր որդու հիմնած գիշերային ակումբի գոյութիւնը համարում է անբարոյական. «Ես ցաւում եմ, որ մեր քաղաքում գիշերային ակումբներ են բացւում, բայց ես դա չեմ համարում ողբերգութիւն, ընդունում եմ որպէս մարտահրաւէր, նշանակում է՝ մենք դեռ գործ ունենք անելու մեր ժողովրդին դաստիարակելու ուղղութեամբ, իսկ այն պատճառաբանութիւնները, թէ դրանցից ռուսներն են օգտւում, դա չքմեղանք է. ի՞նչ է դա նշանակում, գիշերային ակումբների վրայ գրուած պէտք է լինի՝ միայն ռուսների՝ համար: Մենք այնքան ենք յիմարացել, բարոյական իմաստով այնքան ենք ապուշացել, որ մեր գլխաւոր մայր տաճար տանող ճանապարհն անգամ լցրել ենք անբարոյական օբիեկտներով՝ կազինոներով եւ գիշերային ակումբներով, ինչքան խեղաթիւրուած ենք, դեռ չեմ լսել, որ որեւէ մէկն ասի, որ անթոյլատրելի են նման կառոյցները 1700-ամեայ քրիստոնեայ ազգի համար»,- ասում է սրբազանը՝ դժգոհելով, որ Երեւանից Էջմիածին հիւր տանելիս անյարմար վիճակի մէջ է ընկնում: Ըստ սրբազանի՝ իրեն մտահոգողը ոչ թէ գիշերային ակումբների գոյութիւնն է, այլ մարդկանց մտածելակերպն ու քրիստոնէական բարոյականութիւնից հեռացուած լինելը: «Գիշերային ակումբը կարող էր օրէնքով արգելուած լինել, բայց բոլորի մտքում լինէր այդ ակումբը, ես շատ ուրախ եմ, որ օրէնքը արտօնում է գիշերային ակումբների գոյութիւնը, բայց մենք այդ դէպքում էլ չպիտի օգտուէինք նման անբարոյական վայրերից, Աւետարանը պիտի վեր դասէինք: Որպէս հոգեւորականի՝ օրէնքը ինձ էլ չի արգելում գիշերային ակումբ յաճախել, բա ես ինչո՞ւ չեմ այցելում»,- հարցնում է սրբազանը:

**ՆՈՒՆԷ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ**
**«Առաւօտ» օրաթերթ**

A.B.A. INSURANCE SERVICES
Blue Cross · New York Life · Blue Shield
- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Annuity
- IRA
- Estate Planning
- Will & Living Trust
- Workman's Comp.
- Mortgage Protection

Season's Greetings
Շնորհաւորութիւններ
Ամանոր Օրհնութեան Առիթով



ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ
ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 818 269-0909 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

# ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԻ ՓՈՒԹԻՆԻՆ ԵՒ...

*ԱՇՈՏ ԹՈՐՈՍԵԱՆ*

*հովանաւորուել է Զօրեան ինստիտուտի կողմից՝ «Գիտելիքի համընդհանուր կենտրոնի ստեղծում» երկարաժամկէտ ծրագրի պարունակում: Մինչ պաշտօնական կառավարական գրառումները նշում են միայն տասներկու դատավարութիւններ, օսմանեան թերթերը մանրամասներ է ներկայացնում վաթսուներեքի մասին: 2001-ից 2004 թուականների ընթացքում, մի քանի հետազօտողներ շրջել են Թուրքիայի տարբեր քաղաքների գրադարաններում՝ 1919-ից 1921 թուականներին գործող Օսմանեան տասնեօթ թերթերում դատավարութիւնների վերաբերեալ յօդուածները գտնելու եւ թուայնացնելու նպատակով: Անչափ կարեւոր էր ծրագրի դիտաւորութեան մասին պաշտօնեաներին չյայտնելը, քանի որ մուտքը արխիւներ եւ գրադարաններ կարող էր սահմանափակուել կամ արգելուել: Արդիւնքում, Զօրեանն այժմ ունի դատավարութիւնների մասին Օսմանեան թերթերում տպագրուած հարիւրաւոր յօդուածների գրեթէ ամբողջական հաւաքածուն: Այս յօդուածները թարգմանուել են ժամանակակից թուրքերէնի, իսկ յօդուածների վերնագրերը թարգմանուել են նաեւ անգլերէն: Այս թերթերի թուային պատկերները պահպանւում են Զօրեանի արխիւներում:*



*3. Առաջին անգամն է, որ ազգային դատարանը յաջողութեամբ քննել է սեփական քաղաքացիների նկատմամբ զանգուածային բարբարոսութեան այսպիսի դէպք: «Մարդկութեան դէմ յանցագործութիւնների» իրաւական սկզբունքը, որ ձեւաւորուեց այս դատաքննութեան ընթացքում, հեռահար ազդեցութիւններ է ունեցել եւ տեղ է գտել Նյուրնբերգի կանոնակարգում, Տոկիոյի կանոնակարգում, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի ցեղասպանութեան կոնվենցիայում:*

*4. Սա հայոց ցեղասպանութեան երկու միջազգայնօրէն ամենայայտնի գիտնականների՝ ազգութեամբ հայ Վահագն Տատրեանի եւ ազգութեամբ թուրք Թաներ Աքչամի առաջին միացեալ հրատարակութիւնն է:*

*Պատերազմական շրջանի նախարարների դահլիճը, Երիտթրքական կուսակցութեան ղեկավարները, ինչպէս նաեւ շատ ուրիշներ ենթարկուել էին դատաքննութեան՝ ռազմական դատարանի կողմից Առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցութիւնն ապահովելու եւ հայերի բնաջնջումն իրագործելու համար: Շատերին առաջադրուել էին մեղադրանքներ եւ համապատասխան պատժաչափեր՝ ծանր պայմաններով աշխատանքային գաղութներում բանտարկութիւնից մինչեւ մահապատիժ: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը եւ դոկտոր Նազիմը հեռակայ կարգով դատապարտուել էին մահուան:*

*1921թ.-ի Յունուարի 13-ին յատուկ ռազմական դատարաններն ամբողջութեամբ լուծարուեցին՝ իրենց լիազօրութիւնները զիջելով սովորական ռազմական դատարաններին: Մինչ կ'ենթարկուէին դատական պատասխանատուութեան՝ Միասնութիւն եւ Առաջընթաց կուսակցութեան գրեթէ բոլոր անդամները փախուստի ճամբով յաջողութեամբ լքել էին Թուրքիան: Կուսակցութեան մի շարք այլ առաջնորդներ հեռակայ կարգով դատապարտուեցին մահուան կամ ազատազրկման: Այնուամենայնիւ, սրանցից շատերը խուսափեցին պատասխանատուութիւնից կամ ազատ արձակուեցին, քանի որ Դաշնակից ուժերը չափազանց դանդաղ էին դատավարութիւնների իրագործման հարցում, մշտապէս քարկոծում էին միմեանց, եւ ի վերջոյ դուրս բերեցին իրենց ուժերը Թուրքիայից՝ միաժամանակ ազատ արձակելով տասնեակ հազարաւոր ռազմագերիների, ովքեր պատրաստակամօրէն միացան քեմալական ապստամբութեանը: 1923թ.-ի Յուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը Թուրքերի շատ յամառ պնդումներու հետեւանքով ձեւակերպուել էր այնպէս, որպէսզի խուսափէր պատերազմի յանցագործութիւնների եւ ջարդերի թեմայի քննարկումից: Համաներման մասին VIII յայտարարութեամբ եւ պայմանագրին կից արձանագրութեամբ, եւ քանի որ քեմալիզմն ստացել էր առաջնային նշանակութիւն եւ վերջ էր տուել Օսմանեան Կայսրութեանը, հայերի համար արդարադատութեան հետապնդումն աւարտուեց:*

*Ինչպէս նշուել է իրաւաբան Ռաֆայէլ Լեմկինի կողմից, ով առաջինն է շրջանառութեան մէջ դրել «ցեղասպանութիւն» եզրը, հայերի ցեղասպանութիւնն իրենից ներկայացնում է ցեղասպանութեան պատմական առաջին դէպքը, երբ կառավարութիւնը փորձել է վերացնել իր իսկ քաղաքացիներ հանդիսացող էթնիկապէս եւ կրօնականօրէն ճանաչելի մարդկանց մի խումբ, եւ որը հանդիսանում է մի շարք գիտնականների կողմից այսօր որպէս «արդի ցեղասպանութիւն» ճանաչուած երեւոյթի նախատիպը: Սա այն դէպքի դասական օրինակն է, թէ ինչպէս մի յանցանքի անպատիժ մնալը կարող է հանգեցնել նոր յանցանքի, ինչպէս Ադոլֆ Հիտլերն յայտնի կերպով արդարացնում էր իր ծրագիրը՝ 1939թ.-ին հարցնելով իր գեներալներին, թէ «Ո՞վ է այսօր յիշում հայերի ջարդը»:*



*«Դատավարութիւնը Ստամբուլում: Հայոց ցեղասպանութեան դատավարութիւնները» գիրքը նոր հեռանկար է առաջարկում ցեղասպանութեան պատմական ու բարոյական ուսումնասիրութիւնների շուրջ եւ ներկայացնում է քրէական դէպքի մը իրաւական ուսումնասիրութիւնը: Այն կարեւորագոյն նշանակութիւն ունի այսօր՝ հաշուի առնելով ժամանակակից միջազգային հետաքրքրութիւնը ցեղասպանութեան եւ յատկապէս հայոց ցեղասպանութեան եւ դրա ժխտման հարցերի շուրջ:*

*Գրքի ուրուագծին ծանօթանալու համար տես Բովանդակութիւնը ստորեւ:*

### Հեղինակների մասին

*Վահագն Տատրեանի մասնագիտացման բնագաւառը ցեղասպանութիւնն է ընդհանրապէս եւ հայոց ցեղասպանութիւնը մասնաւո-*

*Շար.ը էջ 17*

# «ԳԱՐՈՒՆ Ա ԾԱՂԻԿ Ա ԱՐԵԼ»...

**ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ**

«Գարուն ա», գարնանարարչական լոյս է իջել հայոց լեռնաշխարհին: «Հայկ Համաստեղութեան» հայոց հին աստուածների տաճարից Մայր Անահիտ դիցուհին է եկել Արմինա լեռնաշխարհ, բուռ բուռ ծաղիկ փռել հայոց լեռների լանջերին, հայոց դաշտերին: Արամազդի դուստր Անահիտը, մայրանալու երկունքի լոյս է ցանում հանդերում փթթելու պատրաստ ծառերին: Նորարարչական խինդով պայթած ծառերն են ծիծաղում, հազար գոյների լոյս ճառագում, ծաղկի լոյսով է արբենում հայոց հեքիաթային աշխարհը:

Մտե՞լ ես ծաղկած այգիներ, տեսե՞լ ես ծիածանացած ծառերը, ունկնդրե՞լ ես նրանց ծաղկած լոյսի համանուագը: Քու հոգին էլ ծաղիկ չի՞ դարձել, քու հոգին էլ մայրական սիրոյ հրճուանքով չի՞ ովկիանել: Քու երկրին տիրած մարդիկ, մտե՞լ են արդեօք քու նախնին երի Մայր դիցուհու արարման խանդաղատանքով պայթած ծաղկած այգիներ... չէ, եթէ այնտեղ եղած լինէին, ունկնդրէին այդ համանուագը, նրանց հոգիներում էլ արարարում ծաղկած կը լինէր:

Մեհեան է ծաղկած այգին, մեհեան բացեր երկնքի տակ, ոչ թէ փակ ու մութ խորշ: Աղօթո՞ւմ ես այնտեղ, չէ՛, բնութեան արարչութեանը չեն աղօթում, սքանչանում են նրա հէքիաթով, նրա մայրացման խորհուրդով, նրա լոյսով, նրա արարումով: Լո՜յս, կեանքի առեղծուած, ամպերում իրար դէմ կռուի ելած հիւլէների պայթոյնի, աստղերում իրար փարելու հրճուանքի պոռթկումն է այն: «Լոյսի մի շողը, մութ յաւիտեանն արժէ», պատգամել էր հայոց նահատակուած «Հեթանոս» բանաստեղծ Վարուժանը:

Ծաղիկների բոյլերի մէջ Անահիտի մայրութեան ոգու խորհուրդն է, երկունքի հրավառութիւն է այնտեղ: Ծաղկունքի թերթիկներ են փրթում, հովիկների թեւերին յենած պար բռնում, գնում աւետելու մայրութեան հեքիաթը, ընկնում հողին, արեւի համբոյրի ժպիտ շաղում նրա երեսին:

«Գարուն ա» բանաստեղծներն են գարուն դառնում, նրանց հոգիներում գարնանային արարչութեան ջահեր են վառւում, որոնց լոյսից բանաստեղծութիւն է ճառագում: Բանաստեղծների տաղեր, մարդկանց հոգիներին լոյսի անձրեւ են շաղում, գարնան աւետման, հազար համազարկ զարկում: Իրենց լեռների լանջերից ծաղկունքի փունջեր կապած գնում բարձրանում ողիմպոսի գագաթ, գինով լի բաժակներ զարկում իրենց ներշնչանք պարգեւող մուսաների հետ, բաքոսուհիների իրենց ներշնչման պարգեւող մուսաների հետ, բաքոսուհիների գինարբուքի խրախճանքի տօնահանդէսներին հեթանոսական հրճուանքով արբենում:

«Գարուն ա», Արամազդի որդի, Միհրա եւ աստուածն է ժպտում հայոց աշխարհին: Լոյսով վարար ժպիտն է ցանում արտերի ցորեանի ծովակների ալեակներին, սրտի տաք շունչն է հոսում շէներին: Իրենց ծաղկոտ թեւերը դէպի արեւ բարձրացրած ծառերը, նրա լոյսի կրակ են ըմպում, որ կանաչ հուրթեն, որ այնտեղ ծաղիկ պայթի: Սպիտակ պատմուճան հագած լեռների ձիւնոտ գագաթներն են նրան լոյսի շողերից սարսռում: Նրա ջերմ համբոյրից արտասւում են լեռները, ջրերի արցունկոտ շիթերն են ընկնում հողին, առուակներ առած ուրախ քրքիջով հոսում հեռուներ: Լեռների հողի տաք շունչից, ձիւնէ պատմուճաններն են պատռում հազար, հազար գոյների ծաղիկներ, ձնծաղիկներ: Մատներով փորելով ձիւնը, ձնծաղիկ եմ հանել հողից, փնջեր կապած փարել մօրս, մեր աշխարհի գարունը նրան աւետելու: Ձնծաղիկների ծաղկաբոյլերի թերթիկներից լոյսի հազարագոյնի երանգներ են ցօղում, նրանց սրտերի աստղերի հմայք է պայթում: Ասում են, որ հայոց Աստղիկ դիցուհին ամէն գարնան գալիս է հայոց լեռներ, քաղում ձնծաղիկների ծիածանացած թերթիկներ, սաւառնում հայոց շէների վրայ, ափերով այն ներքեւ ցանում, որ մայրերը այդ ձիւնոտ ծաղիկի նման դուստրեր ծնեն, ահա ինչու են հայոց աղջիկները այդքան սիրուն:

«Գարուն ա», հայոց աշխարհի հողն է ջերմում Միհրի լոյսից: Ռանչպարներն են հանդերում, հողն է տաք-տաք շնչում, ափերով վերցնում, տանում երեսներին, համբոյր շաղում նրա դէմքին: Հողի պաշտամունք է, «Հայրենի», «Մայրենի» են կոչել այն, յաւիտեան թեթեւ ննջում նրա գրկում: Իրենց յափշտակուած աշխարհից մի փշուր հող են բերում տներ, աղօթում այնտեղ հոսած նախնիների խունջանքին, նրա պաշտպանութեան մարտերում արեւորդիների արեան զոհաբերութեանը:

«Գարուն ա», Ծովինար աստուածուհին է հայոց աշխարհի լեռների լանջերից ջուր յորդեցնում, աղբիւրներ պայթում: Սասուն աշխարհի Մարութա սարի պայթած աղբիւրից թռած սպիտակ ձիով է արիական այս ցեղի դիւցազն Անդրանիկը գրոհել թշնամուն: Ծովինարի ջուրն է հոսում հեռու դաշտեր, կեանք պարգեւում նրանց հողին: Ջուրը կեանք է, յաւերժութիւն է: Երկիր մոլորակի եւ տիեզերքի անհուններ միլիոն-միլիոն աստղերին շուրջ պար բռնած երկրների կեանքի առեղծուածն է: Ծովինարը հեքիաթ է, ինքը ջրածին, ինքը ջրից յղիացած, ջրում ծնել որդիներին: Ինքն է տիեզերական հեռուներից ջուր անձրեւում: Գարնան արեւ-անձրեւին իմ այգին ելած ունկնդրել եմ նրա երգի համանուագը, դիտել նրա հեւքից ծաղկած ծառերի ծիծաղը: Գարնան անձրեւին դուրս արի, նայիր վազող ջրերին, այն քու նախնիների ջրի պաշտամունքի Ծովինար աստուածուհին է ընծայ բերել երկիր մոլորակին:

«Գարուն ա, ձիւն է արել»: Չէ վարդապետ, հայոց աշխարհը «ձիւն չի արել»: Վարդապետ, այլեւս «կարմիր» ձիւն չի գայ, «Գարուն ա, ծաղիկ ա արել» հայոց լեռնաշխարհում, գարուններին մայր Անահիտը ծաղիկ է փռում հայոց հանդերին, լեռների լանջերին: Չէ վարդապետ, հայոց աշխարհի ընդերքի հազար գոյնի քարերից հայոց մայր ոստանը, շէները ծիածան շապիկ են հագել, հայերի ակներից ծիծաղի արցունք է հոսում:

Չէ վարդապետ, հանգիստ ննջիր հայոց հողում: Հայոց հին աստուածները տիեզերական իրենց տաճարից նորէն աստղ են ճամբել հայոց աշխարհի երկնակամար, լոյսի կրակ է հոսում հայոց սրտերին, զէնք են վերցրել, կռուի են ելել: Չէ, այլեւս չեն թողնի, որ «կարմիր» ձիւն գայ հայոց աշխարհին: Հայ մշակները քու հորովէլներով հողն են ակօսում, սերմնացաններից ցորեան են շաղ տալիս հողին, այգիներում ծաղկի ծիածան կապած ծառերի հեքիաթ է, հայոց աշխարհի մարդիկ գարուն են դարձել:

«Գարուն ա»: Գնում էինք Արարատին նայելու, կանգնում վիրապի բլուրին, դիմացը հայոց աշխարհի սրտից վեր խոյացած Արարատ-Մասիսներն են: Արեւաճեմ սպիտակ գագաթից ձիւնոտ վարսերն էին շեղջ, շեղջ իջնում դէպի Երասխ-Երասխի ափերին: Անէացած դիտում հայոց աշխարհի սրտից յառնած լեռը: Նրա արարչական ոգին, Արմինա երկրի Հայկի զարմից արեւորդիների հոգիներին անանձնական սիրոյ լոյս է յորդում: Ինչո՞ւ է լեառն այդ ոգի ժայթքում, ինչո՞ւ է նրա խորհուրդ-խորհինը շանթում «Ար», արեւ աստուծոյ որդիներին: Նրա շուրջն է ծաղկել մարդկանց երազային աշխարհը, նրա ստորոտին է նորէն կեանք ծաղկել: Հայոց հին աստուածների ծննդավայրն է այն: Նրա արեգաճեմ գագաթից իջել են դաշտեր ու լեռներ ծաղիկ բուսեցրել, աղբիւրներ պայթեցրել, բարեպաշտութիւն, հողի պաշտամունքի ու արարչութեան ոգու լոյս սփռել: Աստուածների անհատնում բարիք, խնդութիւն, առատութիւն եղեւ:

«Գարուն ա»: Արարատ, քարեղէն սիրտը հայոց աշխարհի, ձեռքերնիս երկարում էինք, որ հպենք նրան, ձնծաղիկ քաղենք նրա ձիւնոտ հողից, ափով ձիւն հաւաքենք... եւ երկաթ փշերն էին ծակել մատներնիս: Հիւսիսից մարդիկ էին եկել, քարդրել հայոց աշխարհի հողին, փշէ լարեր կապել նրա ճակատին, մայր գետի թեւերին: Լացում է Արարատը, ձիւնոտ արցունքը առուակ, առուակ հոսում է Երասխի ջրերին, վշտից փրփրած զարկում ափերին, գնում Մարաստան երկրի արտերին, հանդերին հոսելու:

Բլուրի ստորոտին, հայոց Նոր հաւատքի վայր է, գէմբէթի գլխին իրենց արիական ցեղի արեւի նշան՝ խաչ: Հայոց նախնիները իրենց հին աստուածների տիեզերական հաւատքի տաճարները մեհեան էին կոչել: Սպաննեցին իրենց բարեպաշտ աստուածներին, փլեցին նրանց պաշտամունքի տները: Նրանց լացող վէմերով Նոր հաւատքի տաճարներ պատեցին, ցեղակից յոյներից փոխ առած «եկեղեցի» անուանեցին: Եկեղեցի էին պատել բլուրին:

Խորը Վիրապ կայ այնտեղ: Աւանդել են, որ այնտեղ է տասնըհինգ տարիներ ապրել Պարթեւաց ցեղից, Արշակունի տոհմի արքայասպան Անակ իշխանի Սուրէն որդին: Գրիգոր դարձած եկել հայոց աշխարհի, գինուորագրուել հայոց բանակ, տոհմի մե՞ղքը քաւելու, թէ՞ դաւելու:

Հայոց արքայ Տրդատն էր այդ վիրապում բանտարկել Սուրէն-Գրիգորին, թշնամու դէմ տարած յաղթանակի պատուին ծաղկեպսակ չմատուցելու իր պաշտած աստուածներին, մայր Անահիտին: Հայոց արքաները մահուան վճիռներ չէին արձակել օրինախախտների, յանցագործների նկատմամբ, բանտարկել եւ անշուշտ կերակրել էին նրանց: Այդպէս, այդ բլուրը եղել էր իրենց նախնիների Արմինա երկրի լքուած բերդ, վերածուել բանտի:

Արեւմուտքում կրթութիւն ստացած իմաստուն Տրդատ Գ. արքան, տարբեր հաւատքներ դաւանող երկու սահմանակից կայսրութիւններին չձուլուելու համար, մտադրուել էր հարաւի վարդապետի քարոզած Նոր հաւատքին առաջնորդել երկիրը: Հարիւր, հարիւր տարիներ առաջ էին նրա աշակերտները եկել հայոց աշխարհի հարաւ, քարոզելու այդ հաւաքի ուսմունքը, Միհրի ծնունդը տօնել

Շար.ը էջ 19



# ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋԵԱՆ. «ՀԱՅՈՒ ՆՈՒԻՐԵԱԼ ԲԵԿՈՐՆԵՐԷՆ»

## Դիմանկարի ուրուագիծ՝ գրադատական փորձով

*Գրականութեան պատմութեան մէջ յետեղեռնեայ սերունդ բնորոշումը չգիտես թէ ինչու վերագրւում է միայն արեւմտահայոց հատուածին: Իրականում այն նոյնկերպ բնութագրական պէտք է համարել արեւմտահայոց առումով: Ջնայած Ստեփան Ալաջաջեանի պարագային հանգամանքների իսկութիւնը այլ ելակէտային բնութագրում ունի. ծնուել է Մեծ Եղեռնից յետոյ (1924 թ. Հալէպում), առաջին ժողովածուն «Վշտի ծաղիկներ». բանաստեղծութիւններ, 1942 թ.) հրատարակուել է Հալէպում, բայց ողջ գրական ստեղծագործական կեանքը՝ բուռն ու սրընթաց զարգացումներով անցել է 1946 թուականին Հայաստան ներգաղթելուց յետոյ: Ուրեմն որքան բնական, նոյնքան էլ տրամաբանական է, որ Ստ. Ալաջաջեանը համարուի,- յիրաւի համարուի,- յետեղեռնեան սերնդի այն գրողներից, որոնք Մեծ ոճիրի ուղղակի վերապրածութեան կրողն են, հրաշալի հայութեան շարունակելիութեան որոշեալ գրաւականը՝ արդէն մի այնպիսի պայմաններում, ուր հայ հավաքականութիւնը արժեւորուած էր փաստացի պետութեամբ եւ ոչ թէ մշտնջենական տեսլականով.*

*Այս ամենով հանդերձ, «Անապատում» վէպը (1953 թ.), որը կարելի է համարել Ստեփան Ալաջաջեանի երախայրիքը,- զուտ ստեղծագործական գաղափարայնութեան նշանակութեամբ,- նաեւ գրական աշխարհմուտք գործելու՝ վերապրող սերնդի ներկայացուցչի առանձնայատուկ ու զատորոշող յայտ էր, որ յետոյ պէտք է տարրալուծուէր իր ստեղծագործութեան լայնքով եւ երկայնքով՝ թափանցելով «Փիւնիկ», (1962), «Եղեգները չխոնարհուեցին» (1966,1967), «Ապառաժներն արտասուել գիտեն» (1980), «Զսպիւացած վէրք»)1989,1990) եւ միւս վէպերում, վիպակներում: Այստեղ խնդրոյ առարկան աՀասարսուռ թեման ընդգրկուն, գեղարուեստօրէն կատարեալ ներկայացնելը չէր միայն, որի շնորհիւ գրողը կարճ ժամանակում ժողովրդայնութիւն վայելեց, այլ գրող-գեղարուեստագէտի իմացական ինքնութիւնը չափազանց կարեւորուեց: Այսինքն՝ Ստ. Ալաջաջեանը գրողական մի այնպիսի համակարգ-կառոյցով էր փորձում ներկայացնել մղձավանջային անցեալը եւ ինքնահաստատ այսօրը, որը ընթերցողի,- կամ որ նոյնն է հայութեան,- հոգեւոր թուլացող ուժը, կարողութիւնը անմիջապէս առաջնային նշանակութիւն էր ստանում: Այս հանգամանքը հիմնականում բխում է Ստ. Ալաջաջեանի լիարժէք հայ քաղաքացի լինելու կերպարից, կենսակերպարից: Եւ ամենեւին պատահական չէ, որ տարիներ անընդմէջ նրան վստահուել է հասարակական բարձր գիտակցականութիւն պահանջող մի շարք պաշտոններ (Հայաստանի Գրողների Միութեան քարտուղար, Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի տնօրէն եւ այլն):*

*Եւ եթէ շրջանցենք դասական բնորոշումներից սկիզբ առնող ճանապարհի ընթացքը (չներկայացնելով Ստ. Ալաջաջեանին՝ բուռն ստեղծագործական կեանքով ապրած գրողին, թարգմանչին, ազգային մշակութային գործչին), ապա պէտք է առանձնայատկօրէն նշենք յստակ մտածողութիւն, կենսադիրքորոշում, ի վերջոյ վիպային շարունակական, նպատակադիր կառոյց ունեցող գրողի չափազանց կարեւոր հանգամանքը:*

*Ստեփան Ալաջաջեանի վէպերը մշտաբար հիմնախնդիրների կենսունակութեամբ են նախ եւ առաջ ընթերցելի, դրանով իսկ համընդհանուր ճանաչման արժանացած: Գրողը յստակ գիտակցում էր իր ասելիքի եւ ճշմարտութեան միջեւ եղած տարբերութիւնը, դրանով իսկ մեծաւ մասամբ՝ համանման խնդիրներ էր արծարծում: Գրականութիւնը նա երբեք ճշմարտ անման գեղագիտական եւ գեղարուեստական պահանջների չէր ենթարկում: Մանաւանդ, երբ ընդգծուն ու չափաբերուած էր գրողի առ հայն ու հայապահպանումն ուղղուած հայեացքը՝ խորքային, արտայայտչագեղ: Եւ ի վերջոյ, այն իրականութիւնը, որը Ստ. Ալաջաջեանն էր ներկայացնում, անցեալի եւ ներկայի խորագնին դիտարկումների արդիւնքում էր միայն գեղարուեստական բարձրարժէք հնչողութիւն ստանում:*

*Ստեփան Ալաջաջեանի ապրած կեանքի եւ ստեղծագործութեան միջեւ ամենեւին պէտք չէ հաւասարութեան նշան դնել. ասել է թէ մարդկային կեանքը ինքնին ինչ-ինչ առումով հրամցուած լինելով՝ ենթակայ է վայրիվերումների, մանաւանդ սովետական գերատեսչական իրականութեան պայմաններում:*

*Ստեղծագործական կեանքը ղեկավարւում է մէկ կէտից՝ մտքից: Այս խնդրի գիտակցումը ունէր Ստ. Ալաջաջեանը, քանի որ իր ժամանակի չափազանց բարեկիրթ եւ ուսեալ մտաւորականներից էր, գրեթէ ողու իշխանութեան տակ՝ իր տագնապներն ընկալող եւ նոյն այդ տագնապների հետ հաղորդակցուող:*

*Ըստ այդմ, չափազանց թերի կը լինի Ստեփան Ալաջաջեանի կենդանագիրը առանց բացառիկ հետաքրքրութիւն ներկայացնող նրա յուշագրութիւնների («Լուսաւորեալ խորաններ» (1993), «…Եւ տարուշաններ», (1995), «Ճամփեզրի վրայ», (1998), «Վաթսունականք», (2002), «Յորձանուտը» (2009):*

*Այս խորապատկերի վրայ է նաեւ դիտարկելի, արժեւորելի գրողի անցած յորձանուտային բովանդակ կեանքը: Ժամանակաշրջանային իրադարձութիւնների բովում են ստեղծուել այն գրական արժէքները, որոնք խորապէս անձնային են, դրանով իսկ բնականօրէն ազգային, վստահ ենք ճիշտ ժամանակին ստեղծուած եւ ժամանակների քննութեանը ենթարկուող, քանի որ Ստեփան Ալաջաջեանի գրողական ելակէտը լայն ընդգրկում ունի՝ բանիբուն ազգային հիմքով ու նպատակադրումով:*

www.massisweekly.com
updated every Friday

# ԱՐՑԱԽ

## ԱՆԱՀԻՏ ԻՆՃԵԱՆ

Պատմութեան մէջ մեր հարուստ
Չէի տեղեակ գոյութեան փոքր Արցախին
Որ դարեր շարունակ
Մաս էր կազմած հայ աշխարհին:

Բայց հիմա սակայն ամէն օր ես
Կը տանջուիմ կը հատնիմ,
Կը մատնուիմ անցկութեան ի տես
Արիւնալի եւ երկարատեւ պայքարին:

Ան հայ ազգին սիրտն է դարձած
Որու մէջ եւ որու շուրջ հայ արիւնը
Մարտիկներուն կը թափի
Ազատելու այն պատառը թանկագին
Զոր թշնամին ձեռքէն խլեց ի հրաման Ստալինին:

Հայ քաջերը, որոնք լքած իրենց տունը
Եւ ընտանիք, կը պաշտպանեն զայն
Կը թափեն իրենց սուղ արիւնը
Որ զինք պոկեն թշնամիին բիրտ ձեռքէն

Պզտիկ է թիւը անոնց, այն քաջ
Մարտիկներուն բայց գինը մեծ իրենց
Կռուին, նման Դաւթին որ Գողիաթին
Ճակտին նետեց պզտիկ քարը մին

Ո՜վ Տէր Աստուած օգնէ՛, սրէ՛
Այդ բանակը մեր մարտիկներուն
Որ նուաճեն, յաղթեն ու շպրտեն
Անիրաւ մեր թշնամին
Ըլլան անկախ մի պետութիւն:

Արիւնները հերոսներուն կը հաւաքուին,
Կը միանան, կը ներկեն հողը մեր սուրբ
Եւ չեմ կարծեր ո՜վ Տէր Աստուած
Դուն որ միշտ օգնած ես արդար դատին,

Պիտի չլսես շառաչը այդ հոսանքին
որ կը հոսի եւ կը ներկէ հողը մեր հայրենի
Անոնք կ'ըսեն. »Տէր, մենք տուինք
Մեր ունեցածը էն թանկագին
Անկէ անդին, դուն ես որ պիտի տաս
Դատը վերջին, որ ապագայ հայ
սերունդներ Տէրը դառնան ամբողջական Հայ աշխարհին:

# ԸՆԿՃՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԱՄՊԵՐԸ ԻՆՉՊԷ՞Ս ՀԵՌԱՑՆԵԼ ՄԵՐ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐԷՆ

*Տարեվերջի տօնական օրերը միշտ ալ չեն պատահիր որ ուրախ օրեր ըլլան բոլորին համար: Երբեմն ընկճուածութիւնը կու գայ իր տեղը գրաւելու կարգ մը մարդոց մօտ այս շրջաններուն ընթացքին, մինչ պէտք է այդ օրերը լեցուն ըլլան ուրախութեամբ, զուարթ եւ զուարճալի մթնոլորտով: Նիւթական, ընտանեկան կամ անձնական հարցերը պատճառ կ'ըլլան տխրութեան եւ ընկճուածութեան: Ի՞նչ է միջոցը այս բացասական զգացումներուն չյանձնուելու եւ աւելի բարձր տրամադրութեամբ ուղղուելու դէպի Նոր տարին:*

*Արեւմտեան կարգ մը երկիրներու մէջ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ «տարեվերջը» ականատես կ'ըլլայ ջղային «փլուզումներ»ու եւ հոգեկան ընկճուածութեան դէպքերու: Պատճառը անշուշտ միայն տօնական օրերը չեն, որովհետեւ անոնք միայն կայծը կ'ըլլան կամ խթանիչ գործօնը, որ ընկճուածութեան տարրերը կ'արձակեն եւ դէպի մակերես կը բերեն զանոնք, ինչպէս նաեւ նախապէս չլուծուած կամ նոր ծնունդ առնող վիճակի մը պատճառ կը դառնան:*

** Ընտանիքն ու տօնական օրերու ընկճուածութիւնը.*

*Բոլորս ալ գիտենք, որ տօները առիթ են, որպէսզի ընտանիքները հաւաքուին եւ ընտանեկան հանդիպումներ տեղի ունենան, որոնք երբեմն սրտցաւութեան պատճառ կ'ըլլան, մանաւանդ եթէ ընտանիքի անդամներէն մին բացակայ է կամ եթէ ամուսնալուծման կամ խռովութիւններու պատճառաւ ընտանեկան վիճակին մէջ փոփոխութիւններ յառաջացած են: Այս պայմանները կը վերադարձնեն բաժանումի ցաւը եւ անոր ներկայութիւնը աւելի զգալի կը դարձնեն:*

*Սակայն ընտանեկան հանդիպումները որքան ալ դժուար ըլլան, այսպիսի տօնական առիթներու ընթացքին առանձին ըլլալը աւելի դժուար է եւ կը համարուի ընկճուածութեան մղող գլխաւոր պատճառներէն մէկը: Հետեւաբար, հոգեբանութեան մասնագէտները, ընկճուածութեան սկիզբը իրենց մօտ զգացող անձերուն կը խրատեն տօնական օրերուն խուսափիլ առանձնութենէն, որովհետեւ անպայման գոյութիւն ունին որոշ անձեր, ազգականներ, դրացիներ, ընտանիք կամ բարեկամներ, որոնց հետ կարելի է ուրախ մթնոլորտ պահել այս օրերուն ընթացքին:*

*Իսկ եթէ այս անձերը փափաքին հեռու մնալ տօնական մթնոլորտէ, անոնք կրնան զբօսաշրջիկային արեւոտ վայրեր այցելել՝ արձակուրդ անցընելու նպատակով:*

*Ինչպէս նաեւ ինքզինքդ նուէրներով զբաղցուր,. այդ մէկը լաւ ձեւ մըն է առանձնութիւնը մոռնալու: Գնէ նուէրները, փաթթէ զանոնք եւ շուրջիններդ ուրախացուր անոնցմով:*

** Նիւթական հարցերը.*

*Աշխարհի չորս ծագերուն գոյութիւն ունեցող տնտեսական տագնապի մագլցումը, սղաճը եւ գործի առիթներու նուազեցումը ընտանիքներու տնտեսական վիճակը դարձուցած է շատ ճնշիչ եւ աղբիւր՝ ջղային խանգարումներու շատ պարագաներու: Տօնական օրերուն, նիւթական ճնշուածութեան այս վիճակը կը բազմապատկուի, մանաւանդ ընտանիքներու մօտ, որոնք երբեմն տխուր եւ ընկճուած կը զգան, ի մասնաւորի այն պատճառով, որ այս օրերուն տօնական առիթները 100 տոկոս վաճառականական դարձած են:*

Շար.ը էջ 17

## «ԴԱՏԱՎՃԻՌ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ»

*Շարունակուած էջ 14-էն*

*րապէս: Մի քանի տարներ նա ղեկավարել է ցեղասպանութեան ուսումնասիրութեան մի մեծ ծրագիր, որը հովանաւորւում էր Հ. Գ. Գուգնհայմ փոնդի կողմից: Ծրագրի առաջին հիմնական ձեռքբերումը մի ընդգրկուն հատորի տպագրութիւնն էր, այժմ հինգերորդ ընդլայնուած հրատարակութեամբ, որ վերնագրուած է «Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը. Էթնիկ հակամարտութիւնը Բալկաններից մինչեւ Անատոլիա եւ Կովկաս» (Օքսֆորդ եւ Փրովիդենս, Ռիչմոնդ, 1995): Այս աշխատանքը հրատարակուել է ֆրանսերէնով (Փարիզ, երկրորդ տպագրութիւնը) եւ յունարէնով (Աթէնք) ինչպէս եւ թրքերէնով, սպաներէնով, իտալերէնով եւ հայերէնով: Պրոֆեսոր Տատրեանի մէկ այլ կարեւոր աշխատանքն է «Գերմանիայի պատասխանատուութիւնը Հայոց Ցեղասպանութեան հարցում. Գերմանիայի մասնակցութեան պատմական վկայութեան ակնարկ» գիրքը, որ տպագրուել է 1996-ին (Քեմբրիջ, Մասաչուսեթս) եւ այժմ երրորդ հրատարակութեան մէջ է: Նրա երրորդ գիրքը՝ «Ցեղասպանութեան երաշխիքը. Հայ-թրքական հակամարտութեան կարեւորագոյն տարրերը», լոյս է տեսել 1999-ին (Լոնտոն եւ Նիւ Բնարսուիք, Նիւ Ճըրսի): Հեղինակի վերջին գիրքը վերնագրուած է «Հայոց Ցեղասպանութեան թրքական մերժման կարեւորագոյն տարրերը» (Քէմպրիճ, Մասաչուսեթս, եւ Թորոնթօ, 1999). Այս գիրքը թարգմանուել է սպաներէն Պուէնոս Այրեսում (2002): Բացի նշուած մենագրութիւններից, Տատրեանը տպագրել է մի շարք յօդուածներ աշխարհի տարբեր գիտական ամսագրերում: Հրատարակութիւնների իր ընդարձակ շարքը ներառում է մի քանի յօդուածներ հրէական ողջակիզման եւ ամերիկեան հնդկացիների հետապնդումների մասին: 2005թ.-ին հեղինակն արժանացել է չորս տարբեր մրցանակների՝ ցեղասպանութեան ուսումնասիրութիւններում ունեցած ներդրումների համար: Ներկայումս պրոֆեսոր Տատրեանը Զօրեան Ինստիտուտի Ցեղասպանութեան հետազօտութիւնների տնօրէնն է:*

*Թաներ Աքչամը ծնուել է Թուրքիայի հիւսիս-արեւելքում տեղակայուած Արդահանի շրջանում, եւ վաղ հասակից հետաքրքրուել է թրքական քաղաքականութեամբ: Որպէս քաղաքական ամսագրի գլխաւոր խմբագիր 1976-ին ձերբակալուել եւ դատապարտուել է տաս տարուայ ազատազրկման: Մէկ տարի անց, փախնելով բանտից, յայտնուել է Գերմանիայում որպէս քաղաքական փախստական: Աքչամը հրատարակել է հետեւեալ գրքերը. «Երկխօսութիւնը միջազգային բաժանարար գծի երկայնքով. Ակնարկներ թուրք-հայկական երկխօսութեան մասին» (2001), «Կայսրութիւնից դէպի հանրապետութիւն. Թրքական ազգայնականութիւնը եւ Հայոց Ցեղասպանութիւնը» (2004): «Ամօթալի արարք. Հայոց Ցեղասպանութիւնը եւ թրքական պատասխանատուութիւն» մենագրութիւնը լոյս է տեսել 2006թ.-ի Նոյեմբերին եւ թարգմանուել է հոլանդերէն, ֆրանսերէն, իտալերէն, լեհերէն եւ սպաներէն: Նա առաջին ազգութեամբ թուրք գիտնականն է, որ ուշադրութիւն է դարձրել հայոց ցեղասպանութեան պատմականութեան վրայ եւ որի համար ենթարկուել է թրքական պետութեան հալածանքներին: 2006թ.-ի Ապրիլին Մասաչուսեթսի նահանգային կառավարութեան կողմից պարգեւատրուել է ականաւոր մրցանակով՝ մարդու իրաւունքներին եւ ցեղասպանութեան ժխտման դէմ պայքարին նուիրուած իր կարկառուն աշխատանքի համար: Ներկայումս Քլարք համալսարանի պատմութեան պրոֆեսոր է եւ միաժամանակ ղեկավարում է ողջակիզման եւ ցեղասպանութեան ուսումնասիրութիւնների կենտրոնի Հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութիւնների Գալուստեան/Մուգար ամպիոնը:*

***********

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Օսմաներէն-թրքերէն բառեր եւ անուններ xi
Ներածութիւն 1
Վահագն Տատրեան եւ Թաներ Աքչամ
ՄԱՍ I. Դատավարութիւնների պայմանները
Գլուխ 1. Թուրք-հայկական հակամարտութեան պատմութիւնը 13 Վահագն Տատրեան
Գլուխ 2. Ռազմական պարտութիւնը եւ յաղթողների՝ պատժիչ արդարադատութեան մղումը 19 Վահագն Տատրեան
Գլուխ 3. Յատուկ ռազմական դատարանների նախապատրաստութիւնները 78 Վահագն Տատրեան
Գլուխ 4. Յատուկ ռազմական դատարանների ձեւաւորումը 93 Վահագն Տատրեան
Գլուխ 5. Զարգացող քեմալիզմը եւ յատուկ ռազմական դատարանները 101 Վահագն Տատրեան
Գլուխ 6. Հիմնական դատավարութիւնների շարքը եւ առնչուող դատավճիռները. «Տեղահանութեան», «քաղաքացիական պատերազմի» եւ «միջհամայնքային բախումների» փաստարկների կեղծարարութիւնը 108 Վահագն Տատրեան
Գլուխ 7. Իրաւական վարոյթները որպէս հայեցակարգային պարունակ 126 Վահագն Տատրեան
Գլուխ 8. Դատավարութիւնների շուրջ առկայ պայմանների ամփոփում 154 Վահագն Տատրեան
Գլուխ 9. Որոշ գլխաւոր յանցագործների դատական լուծարումը Միասնութիւն եւ Առաջընթացի եւ՝ քեմալիստ իշխանութիւնների կողմից, եւ այլ մեղսակիցների փնտոման աւարտը 177 Վահագն Տատրեան
ՄԱՍ II. Դատավարութիւններէ անդին
Գլուխ 10. Ստանբուլի ռազմական դատարանի կողմից սահմանուած մահապատիժները 195 Թաներ Աքչամ
Գլուխ 11. Դատավարութիւնների լուսաբանումը Ստամբուլի թրքական մամուլում 200 Թաներ Աքչամ
Գլուխ 12. Օսմանական ռազմական դատարանների ձեւաւորումն ու գործառնութիւնը 251 Թաներ Աքչամ
Գլուխ 13. Մեղադրական եզրակացութիւնների եւ դատավճիռների ամբողջական տեքստերը անգլերէնով 271 Թաներ Աքչամ
Յաւելուած 333
Եզրերի բառարան 335
Արխիւային, դատական եւ խորհրդարանական փաստաթղթեր 337
I. Օսմանեան կայսրութիւնը եւ Թրքական հանրապետութիւնը 337
II. Կայսերական Գերմանիան եւ գերմանական պաշտօնական գրառումները 342
III. Կայսերական Աւստրո-Հունգարիան 344
IV. Մեծ Բրիտանիան 345
V. Ամերիկայի Միացեալ Նահանգները 346
VI. Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը 346
VII. Ֆրանսիան եւ ֆրանսական արխիւները 346
VIII. Հայկական արխիւային փաստաթղթերը 346
Երկրորդային աղբիւրների գրականութեան ցանկ 348
Գրքեր 348
Թուրքերէն 348
Անգլերէն 350
Գերմաներէն 351
Ֆրանսերէն 351
Հայերէն 351
Յօդուածներ 352
Թուրքերէն 352
Անգլերէն 352
Գերմաներէն 353
Հայերէն 353
Թերթեր 354
Թրքական 354
Ֆրանսական 354
Ամերիկեան 354
Բրիտանական 355
Գանատական 355
Աւստրալական 355
Հայկական 355
Ինդեքս Ցուցակ 356

## ԸՆԿՃՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԱՄՊԵՐԸ ԻՆՉՊԷ՞Ս ՀԵՌԱՑՆԵԼ

*Շարունակուած էջ 16-էն*

*Մասնագէտներու կարծիքով, այս պարագային լուծումը կը կայանայ այս եղանակի իսկական իմաստին վերադառնալուն մէջ: Ծնողներուն նախատեսածին հակառակ, երեխաները շատ կը սիրեն տօնական հոգեկան աշխարհէն ներս մուտք գործել, որ իրենց համար տեսակ մը կախարդութիւն կը ներկայացնէ, եւ անոնք քիչով կը բաւարարուին եթէ անոնց ծնողները գիտնան ինչպէս իրենց »ապրեցնեն« անոր ուրախութիւնը, նախ տօնին իմաստին ընդմէջէն եւ ապա միասն աբար գործունէութիւններ կիրարկելով, որոնք ծնունդ կու տան ընտանեկան տեսակ մը աւանդութիւններու, զորս կարելի է կիրարկել ամէն տարի եւ որոնց կը կարօտին անոնք՝ որոնք տօնին մէջ կը տեսնեն միայն անոր առեւտրական երեսը:*

** Հոգեկան հարցերը.*

*Տօնական եղանակներուն, ուրիշ որեւէ ժամանակներէ աւելի, իւրաքանչիւրս պէտք ունինք լսող ականջներու, որոնք կ’օգնեն մեզի թեթեւցնելու մեր նեղութիւնները: Շատ անգամներ պէտք կ’ունենանք մեզի մօտիկ անձերու հետ սրտբաց զրոյց ունենալու, հեռաձայնային երկար խօսակցութիւն մը կատարելու բարեկամի մը հետ կամ թերեւս սրտիդ մօտիկ անձի մը ուսերուն վրայ արտասուելու՝ մէջդ կուտակուած բոլոր ընկճուածութիւնը դուրս հանելու համար, որմով աւելի ունակ կ’ըլլ աս տօնական օրերը դիմաւորելու հոգեվիճակով մը՝ մտահոգութիւններէն տարբեր ուրիշ բաներ տեսնելու պատրաստ:*

*Սրտիդ մէջ տօներու ուրախութիւնը ներս բերելու համար լաւագոյն ձեւը պզտիկներու ընկերակցութիւնն է: Անոնք իրենց ամբողջ սրտով կ’ուրախանան եւ ընդհանրապէս անոնց ուրախութիւնը փոխանցիկ կ’ըլլայ, իրենց շուրջիններուն մօտ խանդավառութեան եւ զուարճութեան մթնոլորտ ստեղծելով:*

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

## ՖՐԱՆՍԱՆ ՍԱՅԼԻ ՈՒ ՄՈՒՐՃԻ ՄԻՋԵՒ

*Շարունակուած էջ 1-էն*

կան, փոխադրական, զինական եւ ապահովագրական բնագաւառներ՝ պիտի ունենան շատ լուրջ ու անսրբագրելի հետեւանքներ եւ ասոր պատասխանատուութիւնը պիտի դրուի նախաձեռնող կողմին վրայ։Էրտողան կը թելադրէ Սարքոզիի կասեցնել օրինագիծին օրակարգի բերումը։

Արտաքին Գործոց Նախարար Ահմէտ Տավուտ Օղլուն , իր հերթին, եւրոպայի դեսպաններու հետ հանդիպում մը ունեցած, որուն ընթացքին «մեկնաբանութեան չկարօտող ծիծաղաշարժ հարցադրումով մը հանդէս եկաւ։ Ան, մանկունակ, անմեղ այլ, հաստատ՝ չարամտօրէն հարցուց «Եթէ ես Ֆրանսա երթամ ու ըսեմ թէ Ցեղասպանութիւն չէ եղած, պիտի ձերբակալեն զի՞ս»։

Ան ի շարս այլ ամբաստանութիւններու, ծանր մեղադրանքի տակ փորձեց առնել Ֆրանսայի ազգային ժողովի ժողովրդավարական, մարդկային , սկզբունքային եւ բարոյական արժէքները , օրինագծի բուէարկութիւնը առնչելով չորս ամիս ետք տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններուն։

Տավուտ Օղլուի տեսաբանութեամբ, օրինագծի վաւերացումը ունի «փոփուլիսթ» բնոյթ։ Յստակ է անշուշտ, որ ակնարկութիւնը ուղղուած էր դէպի հինգ հարիւր հազար հաշուող ֆրանսահայերուն։ Պարզ ասած՝ Սարքոզի, Ահմէտ Տավուտ Օղլույի հաշուով, օրինագծի հաստատման միջոցաւ պիտի ապահովէր իր հայ քաղաքացիներուն քուէները իր ընտրապայքարին մէջ։

Առաջին անգամը չէր, որ Հայաստանի հետ սիրալիր, այլ բարձր մակարդակի յարաբերութիւններու մէջ գտնուող աշխարհով մէկ ծանօթ մարդկային բարձր արժանիքներու պաշտպան Քէ Տորսէն՝ կը մատնուէր ներկայ կացութեան։ Այդ կացութեան նախընթացը հանդիսացած էր Ցեղասպանութեան ճանաչումը՝ Ֆրանսայի Ազգային Խորհրդարանի կողմէ, մօտիկ անցեալին։ Անզարա, մատնուած էր խելացնոր կացութեան, եւ սկսած էր աջ ու ահեակ սպառնալիքներ տեղացնել ֆրանսայի գլխուն, զայն ծունկի բերելու սնամիտ մեծամտութեամբ։

Ֆրանսա չշեղեց իր սկզբունքային գիծը։ Բարձր պահեց իր ասպետական ժողովուրդին արժանապատուութիւնը։ Անտեսեց Ցեղասպանին բոլոր սպառնալիքները, որոնք չնկրտեցան դուրս գալ սպառնալիքի սահմաններէն, շուտով մարելու համար իրենց սաղմին մէջ։

Մենք, հաստատ, հաւատացողներէն ենք, որ ասպետական Ֆրանսայի Ազգային Ժողովը, կիսելով հայ ժողովուրդի դարաւոր այլ միշտ մխացող խորունկ մորմոքը, արժանապատիւ կերպով պիտի հաստատէ համանուն օրինագիծը՝ 23 Դեկտեմբեր 2011-ի իր լիակատար նիստին։ Եւ այս՝ յանուն արդարութեան։

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐՀ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԱՅՑԸ



*Շարունակուած էջ 1-էն*

*Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Աւետարանական Եկեղեցիներու Ընդհանուր Հովիւ Վեր. Ճօ Մաթոսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Գեր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ասորի Ուղղափառ Եկեղեցիէն Մօր Կլէմիս Եօժէն Գաբլան եւ այլ հոգեւորականներ։*

*Բարձրաստիճան հոգեւորականը «Հրաշափառ» երգեցողութեամբ մուտք գործեց եկեղեցի։ Կանոնական աղօթքէն ետք բարի լուսոյ ջերմ խօսքերով հանդէս եկաւ շրջանիս Հայ Կաթողիկէ ժողովրդապետ Հայր Գրիգոր Վրդ. Շահինեան։ Ան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ յարակից մարմիններուն անունով ջերմօրէն ողջունեց զինք մաղթելով քաջառողջութիւն եւ ծառայական բեղուն գործունէութիւն։*

*Իր պատասխան խօսքին մէջ Միքայէլ Եպս. Մուրատեան նախ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ որ զինք կոչած է հովուելու Գանատայի եւ Միացեալ Նահանգներու իր եկեղեցիները, շնորհակալութիւն յայտնեց Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ժողովրդապետ Հայր Գրիգոր Շահինեանին եւ Հայր Արմենակ Պետրոսեանին, որոնք կազմակերպած էին իր հովուապետական այցելութիւնը Գալիֆորնիոյ մէջ։ Նմանապէս ան իր եղբայրական ջերմ ողջոյնները յայտնեց ներկայ հիւր հոգեւորականներուն, քաղաքական եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներուն ու հաւատացեալ ժողովուրդին։ Անուհետեւ յորդորեց սիրել եկեղեցին եւ ընթանալ Քրիստոսի ճամբով եւ աղօթք հայցեց իր անձին համար որպէսզի աստուածահաճոյ իր առաքելութիւնը յաջողութեամբ պսակուի։*

*Բարի գալուստի կրօնական արարողութենէն ետք տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն եկեղեցւոյ կից սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան տարբեր յարանուանութեանց, կազմակերպութեանց, հայ մամուլի ներկայացուցիչներ եւ խուռներամ բազմութիւն մը, որոնք եկած էին անձամբ ծանօթանալու Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Նոր Հովուապետ Արհ. Միքայէլ Եպս. Մուրատեանին։*

*Կիրակի Դեկտեմբերի 18ին Միքայէլ Եպս. Մուրատեան Սան Տիեկօ մեկնեցաւ ընկերակցութեամբ փոխ ժողովրդապետ Հայր Արմենակին եւ պատարագեց տեղւոյն Հայ Կաթողիկէ համայնքին համար։*

*Կ՚իմանանք թէ Գերապայծառը Լոս Անճելըս պիտի մնայ շուրջ երկու շաբաթ եւս, մօտէն ծանօթանալու շրջանիս հայ գաղութին եւ կազմակերպութիւններուն։*

## ԵՐԿՈՒ ՉԱՓԱՆԻՇ ԿԱՄ (DOUBLE STANDARD)

*Շարունակուած էջ 6-էն*

*ճառ դարձած են այսօր որ սխալը ճիշդ նկատուի եւ ճիշդը սխալ։ Անոնց գործելակերպին պատճառաւ է որ մարդս կը տարուի մէկ դժուարութենէ դէպի ուրիշ եւ աւելի դժուար դժուարութիւն։*

*Դիւանագիտութիւն եւ քաղաքագիտութիւն կիրարկող մարդիկ, ամպերէն վեր թռիչք կատարելով, չեն տեսներ կամ չեն զգար տեղատարափ անձրեւը որուն տակ հասարակ մարդոց տուներն ու կեանքերը կ՚աւրուին կամ կը փճանան։ Այլապէս, ինչու՞ չեն դատուիր կամ պատժուիր Պուշ-ի (Bush) եւ Ջէնի-ի (Cheney) նման մարդիկ, կամ Ուօլ Սթրիթ-ի (Wall Street) մեծապատիւ գողերը որ մեր աշխարհի հանգիստը խանգարեցին։*

*Հոս կ՚ուզեմ եզրաբակել գրութիւնս շատոնց կարդացած հայաստանցի երիտասարդ բանաստեղծի մը խօսքով որ կ՚ըսէ։*

*«Ցաւալի է որ նոյն հացն ենք ուտում, նոյն ջուրն ենք խմում, սրիկաները եւ ազնիւ մարդիկ« »։*

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104


**PROJECT BASED VOUCHER NOTICE OF FUNDING AVAILABILITY PBV NOFA NO. 7557**

**The Housing Authority of the City of Los Angeles in collaboration with the Los Angeles Housing Department invites proposals from qualified developers under the Project Based Voucher Program for Permanent Supportive Housing projects that serve extremely and very low income chronically homeless special needs individuals and homeless families, transition aged youth (TAY), seniors and the disabled. Copies of the PBV NOFA may be obtained beginning December 12, 2011 online at http://www.hacla.org/ps/. Electronic proposals will be accepted until 11:59pm, January 9, 2012.**

12/22, 12/29/11
CNS-2224169#
MASSIS WEEKLY


### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*ԹԱԴԷՈՍ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ վերջերս ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը։ Այս առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթէ իրեն։*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*ՅԱԿՈԲ ԽՊՈՅԵԱՆԻ հիւանդութեան առիթով Տիկ. Արաքսի Թաթուլեան շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ եւ առ այդ 100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին։*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Վարդան, Գասպար եւ Ճորճ Գալուստեան (KK Casting) քաջալերելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը $150 կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին։*

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան տխուր առիթով հանգուցեալի ընտանիքը իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով, կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց սուգին։*


Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ Հ.Բ.Ը.Մ.Ի ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Շարունակուած էջ 13-էն

Հանդիսութիւնը վերջ գտաւ հայերէն լեզուի ուսուցչուհի Տիկ. Ա. Թումաճանի պատրաստած բանաստեղծական համադրումի ներկայացմամբ, միջնակարգի ու երկրորդականի աշակերտներու կատարումով:

Յաջորդ միջոցառումը պատմաբան դոկտ. Ճորճ Պուռնութեանի դպրոց այցելութիւնն էր Ուրբաթ, 2 Դեկտեմբեր 2011ին:

Դոկտ. Պուռնութեան գաղութիս կազմակերպութիւններու հրաւէրով Միչիկընէն կ՚այցելէր ներմալսարանի հայկական բաժանմունքի հրաւէրով:

Երկրորդականի աշակերտները հանդիսասրահ հաւաքուեցան կէսօրէ ետք ժամը 2ին եւ Պրն. Ս. Աւետիքեանի բացման խօսքէն ետք մեծ ուշադրութեամբ դիտեցին վաւերագրական ժապաւէնը, որուն հետեւեցաւ հարց ու պատասխանը:

Տիկ. Խարտալեան մանրամասն պատմեց այս նիւթով ֆիլմի պատրաստութեան գաղափարի յղացման ու ժապաւէնի ստեղծման գործընթացին մասին: Միջոցառումը աւարտեցաւ երկրորդականի տնօրէն Դոկտ. Թորոսեանի փակման խօսքով, ուր



կայացնելու վերջերս անգլերէն լեզուով իր հրատարակած աշխատութիւնը՝ Ղարաբաղի բնակչութեան 1823 թուականի Ռուսական վիճակագրական տուեալներու մասին:

Դպրոցի 11րդ եւ 12րդ դասարանի աշակերտները տնօրէն Դոկտ. Յ. Թորոսեանի, Պրն. Ս. Աւետիքեանի, ինչպէս նաեւ երկրորդականի աւագ ուսուցչուհի Տիկ. Ճուտիթ Գատրիի ներկայութեան, ջերմապէս ողջունեցին գիտնականը, որուն հայոց պատմութեան նուիրուած երկհատորեակը կը գործածէին անոնք որպէս դասագիրք: Դոկտ. Պուռնութեան հաճելի ոճով մը անդրադարձաւ Ղարաբաղի ներկայ ու անցեալ պատմութեան: Ան ներկայացուց իր փաստարկները, ուր անվերապահօրէն կը հաստատուէր թէ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան 95 տոկոսը 1823ին, ինչպէս նաւ 1923ին, կը բաղկանայ հայերէ: Դոկտ. Պուռնութեան իր հակիրճ դասախօսութենէն վերջ պատասխանեց աշակերտներու հարցերուն. ան մեծապէս տպաւորուած էր յատկապէս անոնց հայկական հարցերու իրազեկութենէն: Դոկտ. Պուռնութեան շնորհաւորեց դպրոցիս տնօրէնն ու հայկական բաժանմունքի պատասխանատուն բազմակողմանի զարգացած աշակերտներ պատրաստելու համար:

Դասախօսութեան աւարտին Դոկտ. Պուռնութեան շրջեցաւ վարժարանէս ներս եւ այցելեց դասարանները. ան իր գոհունակութիւնը արտայայտեց ի տես դպրոցիս բարեկարգ վիճակին:

Դպրոցական յաջորդ ձեռնարկը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 7 Դեկտեմբեր 2001ին: Այդ օր, դպրոց հրաւիրուած էր Grandma's Tattoos վաւերագրական ժապաւէնի հեղինակ ու ֆիլմարտադրիչ Սիւզան Խարտալեանը, որ Միչիկընէն կը գտնուէր Միչիկընի Տիրպորնի համալսարանի հայկական բաժանմունքի հրաւէրով:

ան շնորհակալութիւն յայտնեց Տիկ. Խարտալեանին իր այս հոյակապ գործին համար եւ շեշտեց թէ կարիքը կայ այսպիսի վաւերագրական ժապաւէններու ստեղծման ու տարածման, որպէսզի մինչեւ Եղեռնի հարիւրամեակ, լաւագոյնս կարենանք ներկայացնել Հայոց Ցեղասպանութեան մանրամասներն ու տարբեր երեսակները:

Ի վերջոյ դպրոցական արտադասարանային ձեռնարկներու ամփոփումը կատարուեցաւ Ուրբաթ, Դեկտ. 9ին, ուր 12րդ դասարանի աշակերտները գլխաւորութեամբ իրենց դաստիարակներ ՊՊ. Աւետիքեանի եւ Մոլին, ինչպէս նաեւ ընկերակցութեամբ վարժարանիս արուեստի ուսուցչուհի Օրդ. Կուէյնային, այցելեցին Տիթրոյթի Արուեստներու Թանգարանը, ըմբոշխնելու հռչակաւոր գեղանկարիչ Րէմպրանտի ցուցահանդէսը: Այն ամբողջովին նուիրուած էր Աստուածաշունչի տարբեր դրուագներուն:

Այսպիսով Մանուկեան վարժարանը իր երկու տնօրէններուն՝ Օրդ. Տայանա Գըզըլեանի ու Դոկտ. Յովսէփ Թորոսեանի գլխաւորութեամբ, լաւատեսութեամբ կը դիմաւորէ 2012 տարին: Տնօրէնները, վարժարանիս ուսուցչական կազմին ու հոգաբարձութեան ու բարեկամներուն համար Նոր Տարուայ առիթով տրուած ճաշկերոյթին, իրենց բարի գալուստի խօսքին մէջ շեշտեցին, որ Մանուկեան վարժարանի յաջողութիւններուն համար նախ եւ առաջ պարտական կը մնանք բարերար եւ դպրոցիս հիմնադիր Ալեք եւ Մարի Մանուկեաններուն, ինչպէս նաեւ անոնց արժանաւոր զաւակներ՝ Ռիչըրտին ու Լուիզին, որոնց անվերապահ նիւթական թէ բարոյական նեցուկով ալ կը շարունակուի հայկական այս կրթական հաստատութեան յաղթական երթը:

Թղթակից

massispost.com
daily news updates

# «ԳԱՐՈՒՆ Ա ԾԱՂԻԿ Ա ԱՐԵԼ»...

Շարունակուած էջ 15-էն

ձմրան արեւադարձին՝ Դեկտեմբերի վերջին: Շատ յետոյ, հռոմէացիք այն պիտի համարէին իրենց նոր վարդապետի ծննդեան օր, զուգադիպութիւ՞ն, թէ՞ իրենց հին հաւատքի յուշերի շարունակութիւն...: Հրամայել էր հայոց երկրում այդ նոր հաւատքի ուսմունքը դաւանել, բանտից ազատ արձակել Գրիգորին: Այդ ինչպէ՞ս եղեւ, որ այդ իմաստուն արքան չհրամայեց երկրում հանդուրժել նաեւ իրենց նախնիների տիեզերական հաւատքը: Սպաննեցին այն, սպաննեցին իրենց հազար, հազար դարերի երկնած իմաստութիւնը...:

Արարատի ճակատն է ընդերքի խռովքից պատռուած, վիհեր են այնտեղ: Ոչ ոք չի յանդգնել այդտեղից բարձրանալ նրա գագաթ: Ասում են թէ չարքեր են այնտեղ եւ թէ հայոց Հայկազուն արքայ Արտաւազդին շղթայել ժայռին: Հայկազուն Արտաշէս արքան էր անիծել նրան՝

«Թէ դու ձի հեծնես որսի գնաս,
Ազատն ի վեր դէպ Մասիսի,
Այնտեղ մնաս լոյս չտեսնես»:

Որովհետեւ եւ Արտաւազդը հօրը թաղման արարողութեան ժամանակ կանչել էր՝

«Երբ դու գնացիր ամբողջ երկիրը քեզ հետ տարար,
Ես այս աւերակաց վրայ ո՞ւմ թագաւորեմ»:

«Գարուն ա, ծաղիկ ա արել», իրենց արիական ցեղի հին աստուածների պաշտամունքով արբեցած պարմաններ քանդել էին փշալարերը, թռել Երասխի ջրերի վրայով, մտել Արարատի վիհեր, այնտեղից Արարատի բարձունքներ բարձրանալ ձնծաղիկ քաղելու, գարնանը ընծայելու Վահագնի ծննդեան տօնին: Վիհում տեսել էին ժայռին շղթայուած Արտաւազդին, արձակել էին...:

Գառնի փլած ամրոցի առաջ, տիեզերքը խորհրդանշող Միհր արեւ աստուծոյ մեհեանն է, դիմացը Խոսրով արքայի լայնատարած անտառը: Ընդերքի խռովքը փլել էր նրան: Հայ քարագործ վարպետներ հաւաքել են նրա բեկորները, նորերը տաշել եւ նոյն վեհութեամբ յաղթ կանգնեցրել: Հայոց Արմինա աշխարհի Միհր աստուծոյ, արեւի լոյսի պաշտամունքի միակ կանգուն մեհեանն է:

«Գարուն ա, ծաղիկ ա արել», իրենց Նահապետի, հայկազուն արքաների, հին աստուածների ոգու խորհուրդը իրենց սրտերում հայոց պարմաններ, Արտաւազդ արքային էին Արարատի վիհից բերել Միհր մեհեան: Հրապարակում հազար, հազար հայեր, ցնծութիւն էր: Թմբկահարներ թմբուկ զարկում, ծիրանի փողեր էին հնչում: Շուրջ պարի շարքերն էին լոյսի ճառագայթներին յենած պար բռնել: Արքան էր բարձրացել մեհեան, քրմուհիներն էին հեթանոսական տաղերով դիմաւորել նրան: Ատրուշանի մոխիրն էր խառնել, կրակ վերցրել, երկինք նետել, որ հայոց աշխարհը կրակի լոյսով ու ջերմով հրավառուէր:

«Գարուն ա, ծաղիկ ա արել», Վահագնի ծնունդն է: Տաճարի աստիճաններից իջնում էին արեգակունք ակներով, Միհրի արեւահուր վարսերով, կրակ պատմուճանով Վահագնը, եղջնեայ ջահը վեր պարզած Ազատաւազդը, հայոց մայր ոստանի քուրմը: Բամբեր էին որոտում, ծիրանի փողեր հնչում, հազար, հազար արմէնների Վահագնի ծնունդի երգն էր թնդում: Մեհեանի աստիճաններին շարան, շարան արեւալոյս քրմուհիները իրենց աստուածներին ձօնուած տաղերն էին հնչում, Արտաւազդն էր եղջնեայ ջահի կրակալոյսը հոսում: Հայոց հին աստուածները Արարատի գագաթից բուռ, բուռ ձիւն էին տեղում: Նրանց շուրջը լայն շրջանակներ կազմած արմէնները, իրենց հեթանոս նախնիների շուրջ պարերի էին ելել: Սեղմել էին շարքերը, Վահագնին ու Արտաւազդին գրկել, ձեռքերի վրայ վերեւ բարձրացրել, որ նորէն բարեպաշտութիւն, համախմբուածութիւն իջնէր հայոց սրտերին, հայոց աշխարհին:

«Գարուն ա», հայոց մայր ոստանի փողոցներն են ելել իշխանութեան կողմ թէ դիմադիր հազար, հազար հայեր, խնդում, ժպտում, ողջունում իրար: «Բամբ Որոտան» երգով Արտաւազդին տանում են դէպի հայոց պալատ: Դարպասներն են բացւում, երկրին «թագաւորողն» է գալիս Արտաւազդին ողջագուրելու: Հայերի ուրախ բացագանչութիւնների տարափի տակ, նրան թեւանցուկ արած գնում դէպի չքամուտք:

Գարուն էր իջել հայոց աշխարհին, երկրի «թագաւորողը» պատշգամբ էր ելել Արտաւազդի հետ: Այնտեղից կանչել, որ հայոց երկրին կը թագաւորի Հայկ Նահապետի զարմից Արտաւազդը: Յորդորել համախմբուածութիւն, միասնութիւն նրա շուրջը, մաղթել հայոց աշխարհին իրենց հին աստուածների բարեպաշտութիւն, ճշմարտութիւն լինի:

Այդպէս է լինելու, գարնան մի օր Հայկի զարմից, «Արա»յի որդի մի Արմէն գալու է բազմելու «Հայոց Գահին», իրենց հին աստուածների բարեպաշտութեամբ, իմաստութեամբ, ճշմարտութեան կառավարելու երկիրը:

«ՔԱՋ ՆԱԶԱՐ»
ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

Հայ news.am


HAPPY HOLIDAYS!
Please Drink Responsibly!
MISSION
WINE & SPIRITS
Like Us On facebook
facebook.com/missionliquor
Season of Savings & Selection!
Follow us on twitter
twitter.com/missionliquor
HOTTEST BUYS FOR THE HOLIDAYS
JOHNNIE WALKER BLACK LABEL 750 ML 21.99
GREY GOOSE VODKA 750 ML 21.99
HENNESSY VS COGNAC 750 ML 21.99
REMY MARTIN XO COGNAC 750 ML 94.99
TSAR ALEXANDER I VODKA 750 ML 19.99
NOY 7 YR BRANDY 750 ML 19.99
UV VODKA 1.75 L 10.99
BELUGA VODKA 750 ML 22.99
WODKA VODKA 1.75 L 14.99
KETEL ONE VODKA 750 ML 17.99
ABSOLUT VODKA 750 ML 12.99
ABSOLUT VODKA 1.75 L 21.99
DON JULIO 1942 ANEJO TEQUILA 750 ML 89.99
CORZO SILVER TEQUILA 750 ML 29.99
SAUZA SILVER OR GOLD TEQUILA 750 ML 8.99
JOSE CUERVO ESPECIAL TEQUILA 1.75 L 19.99
CAZADORES BLANCO OR REPOSADO TEQUILA 750 ML 18.99
HONORABLE REPOSADO TEQUILA 750 ML 12.99
CHIVAS REGAL 12 YR SCOTCH WHISKY 750 ML 16.99
GRANT'S WHISKY 1.0 L 10.99
JACK DANIEL'S WHISKEY 750 ML 13.99
JOHNNIE WALKER BLUE LABEL SCOTCH 750 ML 139.99
CAFE BOHEME COFFEE LIQUEUR 750 ML 9.99
DISARONNO LIQUEUR 750 ML 13.99
REMY MARTIN VSOP COGNAC 750 ML 29.99
BOSSARD VSOP COGNAC 750 ML 29.99
TIGRAN 20 YR BRANDY 750 ML 84.99
ARARAT NAIRI 20 YR. BRANDY 750 ML 79.99
TSAR ALEXANDER I VSOP COGNAC 750 ML 18.99
JACQUES CARDIN VSOP COGNAC 750 ML 13.99
Washington Blvd. Hill Ave. Allen Ave. 210 FWY
Glenoaks Blvd. Highland Ave. N. Pacific Ave. 134 FWY
Burbank Blvd. 405 FWY Woodman Ave. 170 FWY 101 FWY
PASADENA 1785 E. WASHINGTON BLVD. 626-794-7026
GLENDALE 825 W. GLENOAKS BLVD. 818-242-0683
SHERMAN OAKS 13654 BURBANK BLVD. 818-785-6529
STORE HOURS: MON - SAT, 9AM-8PM. (GLENDALE STORE OPEN SUNDAY 10AM-4PM)
SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!
AD PRICES MAY REMAIN IN EFFECT LONGER THAN THE TIME PERIOD INDICATED. WE RESERVE THE RIGHT TO LIMIT QUANTITIES. SALES TAX EXCLUDED. PRICES SUBJECT TO CHANGE WITHOUT NOTICE. AD PRICES GOOD FROM DECEMBER 19TH - DECEMBER 31ST, 2011.